

**ԲԱՅՐՈՅԹԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**ՄԱՐԱՏ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ**

**ԲԱՅԱՀԻՄՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՈՒՄ.  
ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԻԵՐ**

**«Ա.րաբագիտություն» մասնագիտությամբ  
doctor philosophiac (բանասիրական գիտությունների թեկնածուի)  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2010  
ԲԱՅՐՈՅԹ – 2006**

Ատենախոսության թեման հաստատվել է Բայրոյթի համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ.՝ Զոնաթան Օուենս  
(Բայրոյթի համալսարան)

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ.՝ Զոնաթան Օուենս  
(Բայրոյթի համալսարան)  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ.՝ Ռայներ Օսվալդ  
(Բայրոյթի համալսարան)

Պաշտպանությունը կայացել է 2006թ. հոկտեմբերի 26-ին, ժ.13:00-ին, Բայրոյթի համալսարանի  
Լեզվաբանության և գրականագիտության ֆակուլտետի գիտական աստիճաններ շնորհող  
մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Ունիվերսիտետսշտրասե 30, Բայրոյթ, 95447,  
Գերմանիա):

Մասնագիտական խորհրդի ֆարտուղար՝

դոկտոր, պրոֆ. Ու. Շտեմլի-Վերբեկ

Բայրոյթի համալսարանի

Լեզվաբանության և գրականագիտության  
ֆակուլտետի ղեկան՝

դոկտոր, պրոֆ. Գերհարդ Վոլֆ

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Բայրոյթի համալսարանի գրադարանում ([http://opus.ub.uni-bayreuth.de/frontdoor.php?source\\_opus=568&la=dc](http://opus.ub.uni-bayreuth.de/frontdoor.php?source_opus=568&la=dc)):

Սեղմագիրն առավված է 2010թ. ապրիլի 10-ին, Երևան:

## ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մուսուլման ժողովուրդների արաբերենով ստեղծված կամ, ինչպես ընդունված է՝ արաբա-մուսուլմանական մշակույթն առանձնանում է գիտական մտքի հետաքրքրությամբ դեպի արաբերենի (լեզվական) իրողությունները: Գիտությունների համալիրում, որն այս մշակույթում անվանվում է *al-'ulūm al-'arabiyya* (արաբական գիտություններ) ու ընկալվում որպես արաբերենով մշակված հասկացական ապարատի վրա հիմնված դիսցիպլինների ամբողջություն, ի սկզբանե հստակ նկատելի էր լեզվաբանական բաղկացուցիչ, որը ժամանակի ընթացքում, պատմամշակութային յուրահատուկ համատեքստում տարանջատվում ու վերածվում է լեզվաբանական վերլուծության մի համակարգի, որն այսօր հայտնի արաբական լեզվաբանական ավանդույթ (ԱԼԱ) անվամբ:

Արաբական լեզվաբանական ավանդույթի ոչ միայն պատմական ֆննարկման, այլև միջնադարյան արաբ ֆերականների ուսմունքների, տեսական հիմնադրույթների, մեթոդական մոտեցումների ուսումնասիրության կարևորությունն այսօր կարծես թե առանձնահատուկ հիմնավորման կարիք չունի: Մեկ այլ խնդիր է, թե որքանով և արդյո՞ք արդյունավետ է դրանց ֆննադատական կապակցումը լեզվաբանական ուսումնասիրությունների նոր համակարգերի, մոդելների ու մեթոդների հետ:

Մասնակիորեն այսպիսի խնդիր իր առջև անցած դարի 70-ականներից դնում է լեզվաբանության պատմագրությունը (*Linguistic Historiography*): Ի սկզբանե միտված լինելով 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին կեսի եվրոպական լեզվաբանական ժառանգության համակարգային ինտեգրմանը ժամանակի լեզվաբանական տեսություններում ու դրանով իսկ փորձելով լուծել լեզվաբանական գիտելիքի ժառանգականության խնդիրը՝ այն աստիճանաբար զարգանում է որպես գիտակարգ, որը սկսում է «մեթոդաբանական բաղադրատոմսեր» առաջարկել «լեզվաբանական նախորդ կամ պատմական գիտելիքի» իմաստավորման համար:

Թեև հետազոտական նման նպատակադրությամբ ուսումնասիրությունների պատմագրությունը հարուստ է նաև եվրոպական, ռուսական ու նախկին խորհրդային արաբագիտական ավանդույթում, այնուամենայնիվ, ԱԼԱ-ի հետազոտական մոտեցումների ներհամակարգային համարժեք ընկալման ու մեկնաբանման, ինչպես նաև դրանց՝ ժամանակակից լեզվաբանական մեթոդաբանական բազային հենքի վրա իմաստավորման խնդիրը շարունակում է մնալ արդիական արաբական լեզվաբանության խնդրացանկում: Բնագավառում վերջին տարիների հաջողված ուսումնասիրությունները (Կ.Վերստեդ, Ջ.Օուենս, Ռ.Տավոն, Ա.Լևին, Պ.Լաոչեր, Մ.Քարտեր, Հ.Գաբուլյան և այլք) սկզբունորեն նոր մոտեցման հնարավորություններ են ստեղծում ինչպես ԱԼԱ-ի «ընդհանուր տրամաբանության», այնպես էլ մասնակի հարցադրումների ֆննարկման համար:

Հետազոտական նման շրջանակում այս ատենախոսության նպատակն է արաբական լեզվաբանական ավանդույթում ձևաբանական ու իմաստաբանական վերլուծության մեթոդների ու հիմնարար հասկացությունների «ներ- և արտահամակարգային» ներկայացումն ու մեկնաբանումը և հիմնված է արաբ ֆերականներ Սիբավեյհի (*Sībawayhi*, մահ. 180/793), Իբն Ջիննիի (*Ibn Jinnī*, մահ. 392/1002), Ազ-Ջամախշարիի (*az-Zamakhshārī*, մահ. 538/1144), Իբն Յա'իշի (*Ibn Ya'īsh*, մահ. 643/1245) և Ալ-Աստարաբադիի (*al-Astarābādī*, մահ. 688/1286) աշխատությունների վրա:

Վերջիններս, ըստ էության, ներկայացնում են ԱԼԱ-ի գոյության հիմնական փուլերը՝ սկսած լեզվի մասին գիտելիքի համակարգման առաջին փորձերից՝ մինչև ուսումնասիրության ենթակա լեզվական տվյալների շտեմարանի հստակեցում, լեզվաբանական գիտելիքի նորմավորում կամ յուրատեսակ «կանոնիզացիա» ու ժառանգված գիտելիքի ընդլայնում:

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արաբական միջնադարյան ֆերականական ուսմունքները՝ որպես լեզվի ուսումնասիրության ինֆնուրոյն ավանդույթ կամ որպես լեզվաբանական գիտելիքի գոյության առանձին շրջանակ՝

չինականի, հնդկականի, հունականի, լատինականի հետ զուգահեռ, այսօր գրեթե անհնարին են դարձնում արաբերենի ուսումնասիրության ցանկացած փորձ, որը չի անդրադառնում այդ գիտելիքին՝ մասնավորապես, ու արաբական լեզվաբանական ավանդույթին՝ ընդհանրապես: Սա, իր հերթին, պայմանավորում է ատենախոսության արդիականությունը:

Բացի այդ՝ վերջին տասնամյակներում լեզվաբանական ազգային ավանդույթների նկատմամբ հետաքրքրությունն ունի մեկ ոչ պակաս հիմնավոր պատճառ ևս՝ լեզվաբանական ընդհանուր գիտելիքը հարստացնելու ազգային ավանդույթների ներուժը: Այսպես, 20-րդ դարի 60-ականներին լեզվաբանական տիպաբանության զարգացումն ու լեզվաբանական նկարագրության համընդհանուր միջոցների ստեղծման անհրաժեշտությունը պահանջում էր հաշվի նստել նաև «էկզոտիկ» լեզուների գոյության հետ: Եվ եթե հնչյունաբանության դեպքում խնդիրը շատ թե քիչ լուծելի էր թվում, ապա ձևաբանության և շարահյուսության պարագայում ներգրավվող լեզուների հետ մեկտեղ անխուսափելիորեն մեծանում էր դրանց նկարագրումն ապահովող համընդհանուր գործիականագրը, որի ընդլայնումը հակադարձ համեմատական էր ոչ միայն նկարագրման մոդելի համընդհանրության աստիճանն, այլև յուրօրինակ «դիմադրություն» էր առաջացնում ազգային ավանդույթի հետևորդների շրջանում:

Լավագույն օրինակը, թերևս, արաբական բառարմատի «ներքին թեման» շուրջ բանավեճերի շարքն է, որն արևմտյան (մասնավորապես գերմանալեզու) արաբագիտությունում այդպես էլ որևէ արդյունք չտվեց՝ վերջ-ի-վերջո «հանդարտվելով» ու կորցնելով հետազոտողների հետաքրքրությունն ու դրանով իսկ արդիականությունը: Մինչդեռ խնդիրը, շնորհիվ գեներատիվ ձևաբանության, լուծվեց նորմից շեղումների առավելագույն ֆանակ հաշվի առնող մեթոդաբանական մոտեցման միջոցով: Ինչ վերաբերում է նախկին խորհրդային լեզվաբանական շրջանակում զարգացող արաբագիտությանը, ապա այն հանգեցրեց մի դեպքում՝ նկարագրության կոնկրետ միջոցի (*մեզաձևակների*) ստեղծմանը, իսկ մյուս դեպքում՝ մեթոդական նոր մոտեցման առաջադրմանը, որը մասամբ հեռանում էր լեզվաբանական նկարագրության մակարդակային տեսությունից ու վերաիմաստավորում այդ տեսությունից բխող մակարդակային նվազագույն միավորների միջև կապը: Առաջարկվեց ԱԼԱ-ում *հարֆ* հասկացության վերաիմաստավորման նոր մոտեցում (*Հ.Մ.Գաբուլյան*), որը եթե տաղաչափական ուսումնասիրություններում շատ արագ մեծ տարածում գտավ ու վերածվեց նկարագրական հիմնական միավորի՝ ապահովելով արաբական տաղաչափական ամանակային համակարգի գերակայությունը վանկաչափական նկարագրման նկատմամբ, ապա ձևաբանության մեջ այն սահմանափակվեց մի ֆանի, թեև հիմնարար, բայց ոչ ամբողջական ու ավարտուն հոդվածներով: Սրանով իսկ արաբական լեզվաբանական ավանդույթի ձևաբանական ներուժը, չնայած արդյունավետ հիմքին, շարունակում է մնալ ոչ բավարար ուսումնասիրված:

Ատենախոսությունում ձևաբանական վերլուծության մեթոդների ֆնական նկարագրման ու բացատրման ձեռնարկած փորձը, վերոշարադրյալ շրջանակներում, արդիական է ոչ միայն ԱԼԱ-ի, այլև արաբական լեզվաբանության համակողմանի ընկալման համար:

Բացի դրանից՝ դեռևս սկզբնական ձևավորման փուլում են ԱԼԱ-ի իմաստաբանական բաղադրիչի ուսումնասիրությունները՝ չնայած եզակի փորձերի ու համակարգի հիմքերը ներկայացնող մի ֆանի աշխատանքների (Կ.Վերստեդ, Գ.Քուոլլի, Գ.Ենդերս, Հ.Գեթյե): Արաբագիտական շրջանակներում այս ոլորտը, որպես կանոն, վերապահվել է բառագիտությանն ու բառարանագրությանը (Ե.Բրոյնլիխ, Ա.Հաֆներ, Հ.Բրոցֆելդ, Զ.Հայվուդ, Յ.Կրեմեր, Մ.Ուլման, Վ.Շտեֆան, Վ.Մ.Բեկկին և այլք)՝ գրեթե չներառելով ֆերականական աշխատությունները, ինչը, իր հերթին, արտացոլել է 20-րդ դարի ընդհանուր լեզվաբանական միտումը: Գեներատիվ լեզվաբանությունը, ի վերջո, հանգեց իմաստաբանական բաղադրիչի ինտեգրմանը նկարագրական ընդհանուր մոդելի մեջ, իսկ բառարանագրական ուսումնասիրությունների արդյունքում մշակվեց իմաստաբանական

վերլուծության յուրահատուկ ու նաև համընդհանրության ձգտող՝ բաղադրիչային վերլուծության համակարգը (հմմտ.՝ Իմաստաբանական մոսկովյան դպրոցը):

Այս տեսանկյունից ատենախոսության մեջ համադրվում են իմաստաբանական նկարագրման «արաբական ավանդական» ու «ժամանակակից» մեթոդները (մասնավորապես՝ բաղադրիչային վերլուծությունն ու բառարանագրական մոտեցումը, ինչպես նաև նկարագրական ընդհանուր շարահյուսական համակարգում ներանած գեներատիվ իմաստաբանությունը)՝ փորձելով դրանք իմաստավորել լեզվաբանական գիտելիքի գոյության մեկնաբանական մոդելների, մասնավորապես՝ «ընդհատ» կամ «անընդհատ» զարգացման մոդելի տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ՝ ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է լեզվաբանական ազգային ավանդույթների և «ընդհանուր լեզվաբանության» միջև կապի համակարգային իմաստավորման կարևորությամբ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ատենախոսության նպատակը Ա.Ա.-ում ձևաբանական և իմաստաբանական վերլուծության միջոցների, հիմնարար հասկացությունների ու կիրառվող մեթոդական լուծումների վերլուծությունն է՝ դրանց կազմությունը, գործառույթը, համակարգային կապերը, Ա.Ա.-ի տարբեր փուլերում նրանց վերաիմաստավորման պատճառաբանվածությունը վեր հանելու ձգտմամբ, ընդ որում՝ լեզվաբանական ժամանակակից մոդելների հետ համեմատական զուգահեռների անցկացման ու ֆննական վերաիմաստավորման համատեքստում:

Հետապնդելով վերոնշյալ նպատակները՝ ատենախոսությունում խնդիր է դրվում.

- հետազոտել լեզվական իրողությունը լեզվական նկարագրության համակարգի կամ մոդելի վերածման՝ Ա.Ա.-ի առաջարկած հնարավոր ուղին (-ներ),
- վերլուծել դրա(նց) ընտրության լեզվաբանական և արտալեզվաբանական հիմքերը՝ նաև նկարագրման ընդհանուր համակարգում ինտեգրման արդյունավետության տեսանկյունից:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Ատենախոսության գիտական նորույթն անհրաժեշտ է տարբերակել երկու դիտանկյունից՝ ընդհանուր մեթոդաբանական և տեսական:

Ատենախոսության մեթոդաբանական ելակետային նպատակադրույթը՝ Ա.Ա.-ի ձևաբանական և իմաստաբանական վերլուծության համակարգերի հնարավորինս ամբողջական ներկայացումը ավանդույթում գոյություն ունեցող այդպիսի մի ֆանի ուսմունքների համադրության հենքի վրա, հնարավորություն է ընձեռում առավել ընդգրկուն կերպով ֆննարկել դրանց էությունը, տալ նրանցում կառուցվածքային, բովանդակային ու պատճառահետևանքային կապերի մեկնաբանությունը, ինչպես նաև վեր հանել այնպիսի կարևոր դրույթներ, որոնք Ա.Ա.-ում գոյություն ունեն միայն ներակա (իմպլիցիտ) ձևով:

Ձևաբանական և իմաստաբանական տեսության տարբեր սսպեկուներ (ձևային, գործառույթային, իմաստային), որոնք արաբագիտության մեջ, որպես կանոն, դիտարկվում են առանձին-առանձին ու արաբ կոնկրետ ֆերականների աշխատություններում, ատենախոսությունում ներկայացվում են ոչ միայն մեկ ամբողջության մեջ, այլև ժամանակագրական սահմանների գիտակցմամբ ու Ա.Ա.-ի փուլային զարգացման տրամաբանության մեջ, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի խորը հասկանալ տեսություններից յուրահանչուրի էությունը ձևավորման, կանոնավորման ու ընդլայնման փուլերում և այն լուծումների հենքի վրա, որոնք առաջարկում է Ա.Ա.-ն:

Ավանդույթի փուլայնացումը, իր հերթին, թույլ է տալիս արաբ ֆերականների աշխատություններում տարանջատել մեթոդաբանական տարբեր շերտեր՝ նկարագրական, վերագրական, բացատրական,

գործնական-տեսական/ուսումնական և պրագմատիկ: Այս հանգամանքի հստակ գիտակցումը աստենախոսությունը գերծ է պահում ավանդույթը ֆերականական միօրինակ ուսումնական հավաքածու տեսնելու ձգտումից, որը հաշվի չի նստում ժամանակագրական, փուլային ու երբեմն էլ «ժամային» տարանջատումների հետ:

Աշխատանքում կիրառվում են հոգեկեզվաբանության ու կոգնիտիվ լեզվաբանության մեթոդական մոտեցումներ՝ մասնավորապես՝ ԱԼԱ-ի վաղ շրջանի աշխատությունների բննարկման ժամանակ: Արդյունքում արաբագիտական հետազոտություններում գիտական շրջանառության մեջ են դրվում ԱԼԱ-ի՝ այս շրջանին բնորոշ տեսական բազմազանության որոշ տարրերի հետագա նորմավորման ընթացքը պարզաբանող այնպիսի ասպեկտներ ու գործոններ, որոնք դժվար է լուսաբանել միայն տեսաբանական վերլուծության օգնությամբ:

Տեսական մակարդակում լեզվաբանական ավանդույթի ձևաբանական վերլուծության համակարգը դիտարկվում է որպես բառաձևերի (*kalim*) մոդելավորում (*tamtīl*) հասկացական երեք վանկաչափական (*šāraka fi-*), ձևաբանական (*ʿašli/zāʿid*) և բառային (*al-ʿašl*) շերտերում ու վերլուծական սեփական գործիքակազմով, ինչը զուգահեռաբար ենթադրում է բառահիմքերի (*al-bināʾ*) խմբավորում նկարագրական դասերում. սա աստենախոսությունում անվանվում է *մոդելավորող դասակարգում*:

Արաբական ավանդույթի ձևաբանական մոդելներում կիրառվող մեթոդական լուծումներն ու դրանց ներքին, ներհամակարգային պատճառաբանվածությունը բննվում է «*դասակարգման ժամանակ ընտրվող պահվածքի ֆենոմեն*» հասկացության շրջանակում, ինչը թույլ է տալիս առանձնացնել ձևաբանական վերլուծության երկու հիմնական համակարգ: Դրանցից առաջինի գոյությունն աստենախոսությունում հիմնավորվում է նկարագրման ենթակա լեզվական տվյալների հավաքածուում ու հստակեցման կամ, ավելի շուտ, նման տվյալների շտեմարանի (կորպուսի) ստեղծման անհրաժեշտությամբ: Ընդ որում՝ այս խնդիրն ավանդույթի տարբեր փուլերի ձևաբանական մոդելներում տարբեր կերպ է արտացոլվում, մասնավորապես՝ տվյալների բաց բազմությամբ դիմամիկ-կաուզալ դասակարգում ավանդույթի վաղ շրջանում (մինչև 4/10-րդ դդ.) ու փակ բազմությամբ դերիվատիվ խմբավորում դասերում՝ ավանդույթի ուշ շրջանում (4/10-րդ դդ.-ից հետո):

Ձևաբանական մոդելավորման տեսությունը թույլ է տալիս աշխատանքում նորովի մեկնաբանել արաբական ավանդույթի *ʿal-yawma tansā-hu/at-taḍʿif, az-zawāʿid al-ʿarbaʿ* հիմնարար հասկացությունները, ածանցման (*istiḡāq/tašrif*) հիմնական տեսակների շարքում առանձնացնելով նաև *դասարկ ձևույթներ (դասարկ ածանցներ)* կամ ավելի շուտ «*իրացման համար բաց*» *ձևաբանական դիրքեր* հասկացությունը՝ իրացման հստակ ենթահնարավորություններով:

Քառահիմքերի ձևաբանական նկարագրման որոշ միջոցների՝ աստենախոսությունում առաջարկվող վերլուծությունը վեր է հանում արաբական լեզվաբանական ավանդույթում բառաձևերի արտահայտության պլանի մասին ներակա հիմնասյունային հետևյալ պատկերացումները՝ խոսքի հոսքում առանձնացվող բառաձևերը (*kalim*) կազմությամբ *գծային-անընդհատելի* են ու *հաստույթավորվող*: Պնդումը թույլ է տալիս *az-zāʿidatān muftariqatān/az-zāʿidatān mujtamiʿatān* հասկացությունները համադրել ժամանակակից ձևաբանական տեսություններում մշակվող *ընդհատ ածանցների* (Բ.Ա. Մելչուկ, Վ.Պ. Ստարինին) մասին տեսությունների հետ:

Աշխատանքում տրվում է ԱԼԱ-ում ձևաբանական միջոցների «*իմաստային*» տարբերակումը՝ դրանց ֆունկցիոնալ-կառուցվածային տեսակների (*al-ğaraḍ min az-ziyāda, az-ziyāda li-l-maʿnā / li-ʿifādat maʿnā lam yakun, az-ziyāda min ʿašli l-waḍʿ, az-ziyāda li-l-madd, az-ziyāda li-l-ihāq* և այլն) մանրամասն բննարկմամբ ու ավանդույթի զարգացման տարբեր փուլերում հասկացություններից յուրաքանչյուրի բովանդակային սահմանների փոփոխության վերլուծությամբ:

Իմաստաբանական վերլուծությունը ԱԼԱ-ի վաղ շրջանում ներկայացվում է որպես իմաստաբանական բաղադրիչների (որպես ֆերականական իմաստներ կրող (նվազագույն) միավորների) թվարկում, որոնք ավանդույթն ինտեգրում է ձևաբանական նկարագրման մոդելում՝ հարացույցներ կառուցելու նպատակով: Ավելի ուշ շրջանի արաբ ֆերականների աշխատություններում տեսական նման լուծման էությունն արդեն այլ կերպ է մեկնաբանվում, որը թույլ է տալիս ատենախոսության մեջ իմաստաբանական բաղադրիչների ամբողջությունը ներկայացնել ու վերլուծել որպես իմաստաբանական նկարագրության մետալեզո: Ատենախոսությունում կազմվում է այդ մետալեզոյի բառաֆոնդը, ֆինարկվում է բաղադրիչների բաղադրյալ կամ նվազագույն/տարրական լինելու հանգամանքը, առանձնացվում են իմաստաբանական ցուցիչներ (մարկերներ՝ *muğālabā, taxfif, takṭīr, ‘ilāj* և այլն), բազմապատկիչներ (*‘adad, ziyāda/nuṣṣān* և այլն) հասկացությունները, բայերի բառիմաստային խմբերը (*‘amal, al-xiṣāl, al-‘ilal wa-l-‘ahzān, za‘za‘at wa-taḥarruk, aṣ-ṣawt*): Այս ցանկում առանձին ֆինարկման առարկա են ԱԼԱ-ի բայական բառակազմական իմաստները (*ṣayyara, ‘adxala, ja‘l, tasmiya, ta‘rīd, ṣārā ṣāhib, wajada (li-), salb* և այլն):

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 180/793 - 688/1286 թթ. ժամանակահատվածը:

Ելակետային ընտրված 180/793-ը հայտնի ֆերականագետ Սիբավեյհի մահվան տարին է, որի *al-Kitāb*-ը մեզ հասած առաջին ընդգրկուն զուտ ֆերականական աշխատությունն է, և որում այս կամ այն չափով ամփոփվում է ժամանակակից ու ավելի վաղ շրջանի լեզվաբանական գիտելիքը, ներկայացվում է արաբերենի՝ արդեն ձևավորված ու ամբողջական ֆերականական տեսություն:

Ատենախոսությունում ավելի վաղ շրջանի սկզբնաղբյուրների ֆինարկումը, վերլուծվող հասկացությունների՝ ավելի վաղ շրջանին պատկանելու հանգամանքի շուրջ եզրահանգումներ անելու փորձերը կամ ոչ ֆերականական, այլ հարակից, մասնավորապես՝ դուրանագիտական, բառարանագրական բնույթի աշխատություններում այս կամ այն չափով հիշատակվող ֆերականական նյութի ներգրավումը նախ՝ բոլորովին այլ բնույթ կհաղորդեին ատենախոսությանը, և ապա՝ դուրս էին աշխատանքում առաջադրվող խնդիրների շրջանակից:

Սահմանային 688/1286-ը համընկնում է ֆերական Ալ-Աստարաբադիի մահվան տարեթվին: Պայմանականորեն ընդունվում է, որ 13-րդ դարին հաջորդող ֆերականական աշխատություններն արդեն բանաբաղային կամ ամփոփող բնույթ ունեն, և արաբական լեզվաբանական գիտելիքի ընդլայնման/տեսականացման փուլն ավարտվում է այստեղ (խնդիրն այլ է, թե երբ է դադարում գոյություն ունենալ ԱԼԱ-ն):

Նշված հանգամանքներով էլ պայմանավորված է օգտագործված սկզբնաղբյուրների ժամանակագրական ընտրությունը:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՈՒԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Աշխատանքի մեթոդաբանական հենքում ժամանակակից գիտական հետազոտության իմացաբանական հիմքերն են, հասկացական գործիքակազմն ու համակարգային վերլուծությունների սկզբունքը, ինչի շնորհիվ ֆինարկված մասնակի խնդիրները չեն մնում առանձնացված, այլ դիտարկվում են ներհամակարգային փոխադարձ կապերի համատեքստում:

Այս տիպի աշխատանքների համար առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում զարգացումների ու օրինաչափությունների պատմականության սկզբունքը, ինչն ապահովում է ժամանակների կապը լեզվաբանական «ավանդական/պատմական» ու «ժամանակակից» գիտելիքի համադրության, համեմատության համատեքստում: Նշված սկզբունքը կարևոր է նաև լեզվաբանական

ազգային ավանդույթների համակարգային էության բացահայտման ու ժամանակաշրջանի գիտական ձեռքբերումների՝ այժմյան դիրքերից գնահատման դեպքում՝ պայմանով, որ ներառվում են նաև ժամանակաշրջանին բնորոշ մշակութային ու ինտելեկտուալ միջավայրի գործոնները:

Ա.Ա.-ի փուլայնացման մասին պատկերացումներն ատենախոսությունում զուգակցվում են լեզվաբանական գիտելիքի կուտակման շրջանակաձև պատկերացումների հետ, երբ գիտելիքն ընդարձակվում է անփոփոխ միջուկի հենքի վրա: Մոտեցումը հնարավորություն է տալիս առավել համակողմանիորեն դիտարկել Ա.Ա.-ի կոնկրետ հասկացության՝ կոնկրետ մոդելում առաջարկվող վերաիմաստավորման և Ա.Ա.-ի ընդհանուր հասկացական հիմքի փոխազդեցության աստիճանը: Բացի այդ՝ նման մոտեցմամբ ֆննարկումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում լեզվաբանական գիտելիքի զարգացման փուլերի հնարավոր հաջորդականությունը պատմականության սկզբունքի համատեմատում դիտարկելու տեսանկյունից:

Արաբական ավանդույթի ձևաբանական տեսության տարրերը վերլուծելիս ատենախոսությունում փորձ է արվում ոչ միայն բացահայտել դիալեկտիկական կապը այդ տեսության ու դրանում արտացոլվող օբյեկտի՝ արաբերենի միջև, այլև այդ կապի համակողմանի ու առավել ընդգրկուն բացահայտման համար հենվել միջգիտակարգային հետազոտությունների սկզբունքի վրա՝ ներգրավելով մասնավորապես հոգեէզրվաբանության ու կոգնիտիվ լեզվաբանության բնագավառներում լայնորեն տարածված տեսակետներն ու մեթոդական մոտեցումները:

#### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության մեջ առաջ քաշվող հիմնադրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել արաբական լեզվաբանության ոչ միայն տեսական, այլև կիրառական բնույթի աշխատանքներում ու հատուկ դասընթացներում, լեզվաբանության պատմության դասընթացների՝ լեզվաբանական ազգային ավանդույթներին առնչվող հատվածում՝ նպաստելով դրանց կատարելագործմանը: Բացի դրանից՝ ատենախոսությունն առաջարկում է լուծումներ, որոնք կարող են օգտակար լինել լեզվաբանության պատմագրությանն առնչվող հետազոտությունների համար:

#### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը փորձաքննության է ենթարկվել Բայրոյթի համալսարանի լեզվաբանության և գրականագիտության ֆակուլտետում, որի գիտխորհրդի նիստում երաշխավորվել է պաշտպանության: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում, նաև ֆննարկվել Բայրոյթի համալսարանի արաբագիտության ամբիոնի՝ 2003-2006 թթ. կազմակերպած լեզվաբանական սեմինարներում: Ատենախոսության հիմնական դրույթները հեղինակն օգտագործել է «Արաբերենի տեսական ֆերականություն. ձևաբանություն» և «Արաբական լեզվաբանական ավանդույթի պատմագրություն» տեսական դասընթացների պատրաստման համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արաբական լեզվաբանական ավանդույթի ուսումնասիրությունը ենթադրում է տարաբնույթ գիտահետազոտական նյութերի, աշխատությունների ու սկզբնաբյուրների ներգրավում: Ատենախոսությունը գրվել է արաբերեն, գերմաներեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, հայերեն ուսումնասիրությունների ու աղբյուրների հիման վրա:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքն ապահովել են 8-13-րդ դդ. արաբ բերականների<sup>1</sup> (*Abū Ḥayyān, al-Astarābādī, al-Anbarī, Ibn al-Ḥājib, Ibn Hišām, Ibn Jinnī, Ibn as-Sarrāj, Ibn Uṣfur, Ibn Yaʿīš, al-Mubarrad, Sībawayhi, az-Zajjājī, az-Zamaxšarī*) աշխատությունները՝ ներառելով արաբական լեզվաբանական ավանդույթի առանցքային հատվածը:

Ատենախոսությունը հիմնվել է նախկին խորհրդային և արևմտյան արաբագիտական դպրոցների վրա, որոնց ներկայացուցիչներն են Վլ.Ֆ. Գիրգասը, Ի.Յու. Կրաչկովսկին, Ա.Ե. Կրիմսկին, Ն.Վլ. Յուշմանովը, Գ. Յահնը, Թ. Նյուրդեկեն, Գ. Վայլը, Յ. Վայսը, Կ.-Պ. Կասպարին, Վ. Բայթը, Ի. Գոլցիերը, Հ.Մ. Գաբրյույանը, Ա.Ա. Սանչերը, Մ. Բրավմանը, Ա. Շպիտալերը, Վլ.Պ. Ստարինինը և այլք:

Հատուկ ուշադրություն է հատկացվել արաբական ձևաբանությանը, իմաստաբանական խնդիրներին ու Ա.Ա.-ին վերաբերող ուսումնասիրություններին, որոնց շարքում պետք է առանձնացնել Ռ. Բաաբակիի, Ա.Գ. Բելովայի, Հ. Բիրկելանդի, Հ. Բոբցինի, Գ. Բոհասի, Ժ.-Պ. Գիյոմի, Մ. Քարաերի, Գ. Էնդերսի, Վ. Ֆիշերի, Գ.Վլ. Ֆրոլովի, Մ. Ղունեմիի, Գ. Գոլդենբերգի, Բ.Մ. Գրանդեի, Ս.Բ. Կարաբեկյանի, Պ. Լաոչեի, Ֆ. Լեմբուսի, Ա. Լևինի, Ի.Ա. Մելչուկի, Ու. Մոզելի, Ջ. Օուենսի, Գ. Սաադի, Յ. Սուլեյմանի, Ռ. Տավոնի, Կ. Վերստեդի, Գ.-Բ. Վայսի, Շ. Վիլդի, Վլ.Ս. Խրակովսկու, Բ.Ջ. Խալիդովի և այլոց հետազոտությունները:<sup>2</sup>

<sup>1</sup> **Abū Ḥayyān** Muḥammad b. Yūsuf Ibn Ḥayyān al-ʿAndalusī (652/1256). *al-Mubdaʿ fi t-taṣrīf*, ed. by ʿAbd al-Ḥamīd as-Sayyid Ṭalab. Kuwait: Dār al-ʿArūba. 1982; Muḥammad b. al-Ḥasan Raḍī d-Dīn **al-ʿAstarābādī** (688/1286). *Šarḥ šāfiyat Ibn al-Ḥājib*. Vols. 1-4, ed. by Muḥammad Nūr al-Ḥasan, Muḥammad az-Zafzāf, Muḥammad ʿAbd al-Ḥamīd. Beirut: Dār al-Kutub al-ʿIlmiyya. 1975; ʿAbū l-Barakāt ʿAbd ar-Raḥmān b. Muḥammad **Ibn al-ʿAnbarī** (577/1187). *Kitāb al-insāf fi masāʾil al-xilāf bayna n-naḥwiyyīna al-basriyyīna wa-l-kūfiyyīna*. Vols. 1-2, ed. by M. ʿAbd al-Ḥamīd. Beirut: Dār al-Fikr; Jamāl ad-Dīn ʿAbū ʿAmr ʿUṭmān b. ʿUmar **Ibn al-Ḥājib** (646/1248-9). *al-ʿIdāḥ fi šarḥ al-mufaṣṣal*. Vols. 1-2, ed. by Mūsā Banāy al-ʿUlaylī. Bagdad: Maṭbaʿat al-ʿAnī; Jamāl ad-Dīn ʿAbū Muḥammad ʿAbdallāh b. Yūsuf **Ibn Hišām** (761/1359-60). *Šarḥ šuḍur al-ḡahab fi maʿrifat kalām al-ʿArab*. Cairo; ʿAbū l-Faṭḥ ʿUṭmān **Ibn Jinnī** (392/1002). *al-Munšif*. Vols. 1-3, ed. by Ibrāhīm Muṣṭafā, ʿAḥmad ʿAmin. Cairo: ʿIdarat ʿIhyaʿ at-Turāṯ al-Qadīm. 1954-1960, *al-Xašāʾiṣ*. Vols. 1-3, ed. by M.ʿA. an-Najjār. Cairo. 1952. 1955. 1957; ʿAbū Bakr Muḥammad b. as-Sārī b. Sahl **Ibn as-Sarrāj** (316/928). *al-Mūjaz fi n-naḥw*, ed. by Mustafa Ghounemi, Bensalem Damerdjī. Beirut: Badran. 1965, *al-ʿUṣūl fi n-naḥw*. Vols. 1-3, ed. by ʿAbd al-Ḥusayn al-Fatī. Beirut: Muʿassasat ar-Risāla. 1985; ʿAbū l-Ḥasan ʿAlī b. Muʿmin **Ibn Uṣfur al-ʿIṣbīlī** (669/1271). *al-Mumtī fi t-taṣrīf*. Vols. 1-2, ed. by Muḥammad ʿAbd al-Ḥamid. Beirut: Dār al-Kitāb al-ʿArabiyy. 1955; Muwafaq ad-Dīn Yaʿīš b. **ʿAlī Ibn Yaʿīš** (643/1245). *Šarḥ al-mufaṣṣal*. Vols. 1-10. Cairo: Maktabat al-Mutanabbī and Beirut: ʿAlam al-Kutub; **al-Mubarrad**, (285/898). *al-Muqṭadab*. Vols. 1-2. Cairo. 1898; ʿAbū Bišr ʿAmr b. ʿUṭmān b. Qanbar **Sībawayhi** (180/793). *al-Kitāb*. Vols. 1-2, ed. by Hartwig Derenbourg. Paris: Impremiere Nationale. 1881. (Hildesheim, New York: G.Olms. 1970); ʿAbū l-Qāsim ʿAbd ar-Raḥmān b. ʿIshāq **az-Zajjājī** (337/949). *al-ʿIdāḥ fi ʿūl an-naḥw*, ed. by Mazin alMubārak. Beirut: Dār an-Nafāʾis. 1979; *al-Jumal*. Paris. 1957; ʿAbū l-Qasim Maḥmūd b. ʿUmar **az-Zamaxšarī** (538/1144). *al-Mufaṣṣal fi ʿilm al-ʿarabiyya*, ed. by Muḥammad al-Halabī. Beirut: Dār al-Jil.

<sup>2</sup> **Baalbaki, Ramzi**. (2001-2002). „Iḥāq as a Morphological Tool in Arabic Grammar“. *Jornal of Arabic and Islamic Studies* 4.1-26; **Белова, А.Г.** (1991). «Морфемы в семитских языках (на материале арабского)». *Морфемы и проблемы типологии*, отв. ред. И.Ф. Вардуль, 177-219. Москва: Наука; **Birkeland, Harris**. (1940). *Altarabische Pausalformen*. Oslo: Kommissjon Hos Jacob Dybwad; **Bobzin, Harmut**. (1983). „Zum Begriff der ʿValenzʿ des Verbs in der arabischen Nationalgrammatik“. *The History of Linguistics in the Near East*, ed. by Cornelis H.M. Versteegh, Konrad Koerner and Hans-J. Niederehe, 93-108. Amsterdam and Philadelphia: J. Benjamins; **Bohas, Georges and Guillaume, Jean-Patrick**. (1984). *Études des théories des grammairiens arabes. Morphologie et Phonologie*. Damascus: Institut Français de Damas; **Bravmann, Max**. (1934). *Materialen und Untersuchungen zu den Phonetischen Lehren der Araber*. Göttingen: Dieterichsche Universitäts- Buchdruckerei; **Carter, Michael G.** (2004). *Sībawayhi*. Oxford: Oxford University Press; **Endress, Gerhard**. (1986). „Grammatik und Logik. Arabische Philologie und griechische Philosophie im Widerstreit“. *Sprachphilosophie in Antike und Mittelalter*, hrsg. Burkhard Mojsisch, 163-299. Amsterdam: B.R.Grüner; **Fischer, Wolfdiétrich**. (1989). „Zur Herkunft des grammatischen Terminus ḥarf“. *Jerusalem Studies in Arabic and Islam* 12.135-145; **Frolov, D.V.** (2000). *Classical Arabic Verse: History and Theory of ʿArūd*. Leiden: E.J. Brill; **Габучан, Г.М.** (2000). *Арабское словоизменение*. Докт. диссертация. Москва; **Ghounémi, Moustapha**. (1966). *Le verbe dans le Coran*.

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրահանգումներից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և աշխատանքում օգտագործված արաբական տերմինների մեկնական բառացանկից:

**ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ** մեջ համառոտ հիմնավորվում է ատենախոսության թեմայի տեսական նշանակությունը, արդիականությունը, հստակեցվում աշխատանքի ընդհանուր ուղղվածությունը, մեթոդաբանական, աղբյուրագիտական հիմքը:

Ատենախոսության **ԱՌԱՋԻՆ ԳԼԽՈՒՄ**, որը վերնագրված է «**ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՈՒՄ**», հստակեցվում են լեզվական այն երևույթների շրջանակն ու միավորների սահմանները, որոնք արաբական լեզվաբանական ավանդույթը սովորաբար բնում է ձևաբանություն (*ilm at-tasrif*) բաժնում՝ հակադրելով այն *nahw*-ին (շարահյուսություն):

Հիմնվելով Իբն Ուսֆուրի (*Ibn 'Usfur*, մահ. 669/1271), Իբն ալ-Հաջիբի (*Ibn al-Hājjib*, մահ. 646/1248-9) և Ալ-Աստարաբադիի (*al-Astarābādī*, մահ. 688/1286) աշխատությունների վրա՝ *ilm at-tasrif*-ում տարանջատվում են երկու բաժիններ, որոնցից առաջինը պայմանականորեն անվանվում է *tasrif I*, և որի ուսումնասիրության առարկան ԱԼԱ-ն սահմանափակվում է *'abniyat al-kalim*-ի (բառաձևերի հիմքեր) շրջանակներում: ԱԼԱ-ի *tasrif I*-ը մասնակիորեն համընկնում է ժամանակակից ձևաբանական ուսումնասիրությունների այն հատվածին, որը ռուսալեզու գրականությունը վերջին տարիներին նախընտրում է անվանել *формалъ длапаранологическа* (*морфемика*): *tasrif I*-ում ներառված է

---

Paris: Librairie C.Klincksieck; **Goldenberg, Gideon.** (1994). „Principles of Semitic Word-Structure“. *Semitic and Cushitic Studies*, ed. by. Gideon Goldenberg & Shlomo Raz, 29-64. Wiesbaden: O.Harrassowitz; **Гранде, Б.М.** (1963). *Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении*. Москва: Издательство восточной литературы; **Haarmann, Ulrich.** (1974). „Religiöses Recht und Grammatik im klassischen Islam“. *Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft*. Supplement II.149-169; **Jahn, Gustav.** (1969). *Sibawaihi's Buch über die Grammatik*. Bde.1-2. Hildesheim: G.Olms; **Jenni, Ernst.** (1968). *Das hebräische Pi'el: syntaktisch-semasiologische Untersuchung einer Verbalform im Alten Testament*. Zürich: EVZ-Verlag; **Larcher, Pierre.** (2003). *Le système verbal de l'Arabe classique*. Publications de l'Université de Provence; **Levin, Aryeh.** (1979). „The Meaning of ta'addā al-fi'l 'ilā in Sibawayhi's al-Kitāb“. *Studia Orientalia Memoriae D.H. Baneth Dedicata*. 193-210. Jerusalem, (1986). „The Mediaeval Arabic Term *kalima* and the Modern Linguistic Term Morpheme: Similarities and Differences“. *Jerusalem Studies in Arabic and Islam* 7.423-446; **Löschner, Harald.** (1971). *Die dogmatischen Grundlagen des Š'itischen Rechts. Eine Untersuchung zu modernen imamitischen Rechtsquellenlehre*. Erlangerer juristischen Abhandlungen. Bd.9. Köln, Berlin, Bonn, München: C.Heymanns; **Melčuk, I.A.** (1976). *Das Wort. Zwischen Inhalt und Ausdruck*, ed. by Johann Biedermann, 258-287. München: W.Fink; **Mosel, Urike.** (1975). *Die syntaktische Terminologie bei Sibawaih*. Inaugural-Dissertation. München; **al-Nassir, A.A.** (1993). *Sibawayh the Phonologist*. London and New York: Kegan Paul International; **Nöldeke, Theodor.** (1963). *Zur Grammatik des klassischen Arabisch*. Darmstadt: Wissenschaftliche Buchgesellschaft. [1897]; **Owens, Jonathan.** (1988). *The Foundations of Grammar: An Introduction to Medieval Arabic Grammatical Theory*. Amsterdam and Philadelphia: J.Benjamins, (1990). *Early Arabic Grammatical Theory*. Amsterdam and Philadelphia: J.Benjamins; **Reuschel, Wolfgang.** (1959). *Al-Xalīl Ibn Aḥmad, der Lehrer Sibawayhis, als Grammatiker*. Berlin: Akademie-Verlag; **Saad, George Nehme.** (1982). *Transitivity, Causation and Passivization: A Semantic-syntactic Study of the Verb in Classical Arabic*. London: Kegan Paul International; **Санчес А.А.** (1968). «К вопросу о сущности системы арабской метрики». *Арабская филология*, А.А. Ковалев, Г.М. Габучан, 86-95. Москва: Наука, (1974). «О логических основах традиционной арабской грамматики». *Вестник Московского университета. Серия Востоковедения* 2.68-74; **Sezgin, Fuat.** (1984). *Geschichte des arabischen Schrifttums*. Band IX. *Grammatik*. Leiden: E.J.Brill; **Spitaler, Anton.** (1955). „Materialen zur Erklärung von Fremdwörtern im Arabischen durch retrograde Ableitung“. *Corolla Linguistica. Festschrift Ferdinand Sommer dargebracht von Freunden, Schülern und Kollegen*, 211-220. Wiesbaden: O. Harrassowitz; **Старинин, В.П.** (1963). *Структура семитского слова. Прерывистые морфемы*. Москва: Восточная литература; **Suleiman, Yasir.** (1999). *The Arabic Grammatical Tradition: A Study in Ta'īl*. Edinburgh: Edinburgh University Press; **Talmon, Rafael.** (1982). „Naḥwiyyūn in Sibawayhi's Kitāb“. *Zeitschrift für arabische Linguistik* 8.12-38; Versteegh, Cornelis H. M. (1977). *Greek Elements in Arabic Linguistic Thinking*. Leiden: E.J.Brill; **Weil, Gotthold.** (1913). *Die grammatischen Schulen von Kufa und Basra*. Leiden: E.J.Brill; **Weiss, Bernard George.** (1966). *Language in Orthodox Muslim Thought: A Study of "wad' al-lughah" and its Development*. Ph.D. thesis, Princeton University; **Weiss, Josef.** (1910). „Die arabische Nationalgrammatik und die Lateiner“. *Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft* 64.349-390; **Wild, Stefan.** (1965). *Das Kitāb al-'Ain und die arabische Lexikographie*. Wiesbaden: O.Harrassowitz; **Wright, William.** (1859-1862). *A Grammar of the Arabic Language*. 2 Vols. Cambridge: Cambridge University Press.

նաև «ձևաբանական նշանակությունները» (*ma'ānī*) ֆննարկումը, այնքանով, որքանով դրանց օգնությամբ կարելի է բառահիմքերի ավելի ամբողջական հարացույցներ կառուցել:

*ilm at-tasrif*-ում տարանջատվող մյուս ենթաբաժինը, որը պայմանականորեն անվանվում է *tasrif II*, կարելի է ներառել ժամանակակից ձևա-հնչյունաբանության հետաքրքրությունների շրջանակում: Այստեղ ուշադրության կենտրոնում բառահիմքերի (ձևույթի) սահմաններում տեղի ունեցող (հնչյունային) այնպիսի փոփոխություններն են, որոնց արդյունքում բառահիմքի (ձևույթի) արտահայտության պլանը մի «վիճակից» անցնում է մյուսին (*'ahwāl 'abniyat al-kalim*), և որոնք չեն հանգեցնում բառահիմքի փոփոխության:

Ատենախոսության հետազոտական շրջանակը սահմանափակվում է ԱԼԱ-ի ֆորմալ ձևաբանական (*tasrif I*) հատվածով:

Ատենախոսությունում առանձին ֆննարկման առարկա է բառածև (*kalim*) հասկացությունը: Նշվում է, որ բառածև հասկացությունը ռելեվանտ ու միաժամանակ շրջանակային միավոր է ԱԼԱ-ի ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական (*nahw*) հատվածներում: Խոսքի հոսքում *kalim*-ի տարանջատման կամ առանձնացման գործառույթն ԱԼԱ-ում վերապահվում է շարահյուսությանը. ձևաբանական մակարդակում այն հանդես է գալիս արդեն որպես թեմական (*mu'rab*) կամ ոչ թեմական (*mabnī*), կառուցվածքով ամբողջական ու հստակ սահմաններով (համեմայնդեպս բառավերջի՝ *ḥarf al-'irāb* և *ḥarf al-binā'* ցուցիչներով) առանձնացված միավոր:

ԱԼԱ-ում *tasrif I*-ի հիմնական՝ բառածևերի ամբողջությունը բառույթում սահմանափակելու ու ձևաբանական նույնօրինակ կազմությամբ բառույթները նմուշային կաղապար-հարացույցներում ընդգրկելու խնդրի ֆննարկումը ցույց է տալիս, որ այն լուծվում է բառածևերի կառուցվածքը մի քանի շերտերում մոդելավորելու ճանապարհով:

Առաջին՝ *վանկաչափական շերտում*, բառածևերը ԱԼԱ-ն դիտարկում է որպես որոշակի ֆանկություններ ու հաջորդականությամբ դասավորված ձայնավորված (*ḥarf mutaḥarrrik*) կամ չձայնավորված (*ḥarf sākin*) հարֆերի ամբողջականություն, որը ենթակա է վերլուծության հարացուցչային հարաբերություններում. շարահարական հարաբերությունները վերապահվում են *nahw* բաժնին: Մոդելավորման այս շերտը ավանդույթը ներառում է *šāraka fi-* հասկացության բովանդակային սահմաններում, որն ապահովում է մոդելավորման վանկաչափական  $\{C_1V^{/u,a,i,ø/}, C_2V^{/u,a,i,ø/}, \dots, C_n\}V^{/u,a,i,ø/3}$ . կմախքը:

Մոդելավորման հաջորդ՝ *ձևաբանական շերտում*, ավանդույթը ֆորմալացնում է *šāraka fi-* կոնցեպտը՝ նախ *FSL* սիմվոլների միջոցով, որոնք մոդելավորվող բառածևում ֆիքսում են առաջին, երկրորդ և երրորդ (չորրորդ, հինգերորդ, վեցերորդ) դիրքերը (*mawḍi'*)՝ այդ դիրքերում իրացված միավորներին (հարֆերին) վերագրելով ձևաբանական որոշակի կարգավիճակ. դրանց ամբողջությունը կազմում է բառածևի այն հատվածը, որն ԱԼԱ-ն անվանում է *'ašl*, իսկ արաբագիտական ավանդույթը՝ *արմատ, ստուգաբանական արմատ, արմատական բառահիմք, հիմնական ձևույթ* և այլն: *'ašl* կազմող միավորներն անվանվում են արմատական՝ (*ḥurūf*) *'ašliyya*:

Բառածևում *'ašl*-ը տարանջատելու հիմնական չափանիշներն ԱԼԱ-ում իմաստաբանական բնույթի են (սրանով է պայմանավորված արաբագիտական ավանդույթում այդ միավորը *ստուգաբանական արմատ*, կամ ընդհանրապես՝ *արմատ* մեկնելու միտումը): Ավելի ուշ շրջանում արաբական ավանդույթն առաջարկում է նաև բառածևում *'ašl*-ը տարանջատելու ֆորմալ չափանիշներ (Իբն Ուսֆուր, Ալ-Աստարբադի): Դրանք կառուցվում են *ištiqāq* և *tasrif* հասկացությունների շրջանակում, որտեղ *'ašl*-ն այն ընդհանուր (ձևային) միավորն է, որը վերաբաշխվում է բառածևերի (կամ

<sup>3</sup> Բանաձևում միջակետերով տրվում են ձայնավորված /u,a,i,/ կամ դադարով /ø/ հարֆի (CV) սահմանները: Փակագծերով {} ամբողջական միավորի (բառածևի) ձևաբանական վերլուծության ենթակա սահմանները: 1, 2, 3 դասիչներով տրվում է հարֆի դիրքը միավորում, որտեղ *n*-ը սահմանափակ ֆանակ է:

կաղապարների) որոշակի ցանկում: Այդ ցանկն ԱԼԱ-ում ներկայացվում է որպես տվյալ 'ašl-ի tašrīf (դիստրիբուցիա): Ընդ որում՝ ցանկում ավանդույթը միշտ առանձնացնում է ելակետային միավոր, որի համեմատ մյուս բոլոր միավորները դիտարկվում են որպես ածանցյալ. սա ԱԼԱ-ն դիտարկում է որպես տվյալ 'ašl-ի ištiqāq (բառակազմություն):

Բառաձևում 'ašl-ի ու արմատական միավորների (*hurūf 'ašliyya*) տարանջատումից հետո, ավանդույթը մնացյալ բոլոր միավորները նկարագրական մոդելում իմաստավորում է վերջիններիս հիմքի վրա՝ որպես *hurūf zā'ida*: Դրանց վերագրվում է այսպես կոչված *լրացուցիչ միավորների* (ածանց) ձևաբանական կարգավիճակ, ու առաջարկվում է նրանց ֆորմալացման երկու տարբերակ:

Նախ՝ ոչ արմատական դիրքերում իրացված հարֆերը չեն ֆորմալացվում, սակայն որպես *hurūf zā'ida* միավորներ դրանց թիվը նկարագրական մոդելում նվազեցվում է մինչև որոշակի աֆիոմատիկ ֆանակի (*'*, *m*, *n*, *t*, *s*, *h*, *l*, *y*(*i*), *w*(*ū*), *ā* կամ *'al-yawma tansā-hu*), որն ընկալվում է որպես ձևաբանական վերլուծության միավորների փակ դաս և ենթակա չէ ընդլայնման (երկրորդական ձևույթներ): Գաղափարը էմպիրիկ դիտարկումների (ամենայն հավանականությամբ, բառարանագրական ջանքերի ընթացքում) տեսականացման օրինակ է, որի գերակայության հիմքի վրա առաջարկվում է *hurūf zā'ida* միավորների ֆորմալացման երկրորդ տարբերակը:

Խոսքն այս դեպքում կրկնավորվող արմատականներով բառաձևերի (*or.*՝ *karrama*) մասին է, երբ կրկնակներից մեկն ավանդույթը ֆորմալացնում, ասել է թե՛ վերլուծում է որպես արմատական միավոր, իսկ մյուսը՝ ընկալում որպես այնպիսի լրացուցիչ միավոր (*harf zā'id*), որը չի կարող ֆորմալացվել *'al-yawma tansā-hu* տրամաբանությամբ, քանի որ ձևաբանական միջոցների փակ դասի գաղափարը կորցնելու է նկարագրական իր արժեքը, իսկ դասը տեսականորեն ընդլայնվելու է մինչև արաբերենի բոլոր հնչույթները: Ուստի մոդել է ներմուծվում է «դատարկ լրացուցիչ միավորի» կամ «դատարկ» *zā'id* ձևաբանական դիրքի հասկացությունը, իսկ կրկնավորված բառաձևերի նկարագրության (*at-tad'īf*) դեպքում ընդունվում է, որ կրկնավորվում է ոչ թե արմատական միավորը, այլ այն դիրքը, որտեղ իրացված է այդ միավորը:

Դիրքային նկարագրության և տեսականացման այսօրինակ լուծումը թույլ է տալիս միշտ անփոփոխ պահպանել ձևաբանական միջոցների *'al-yawma tansā-hu* դասը (հմմտ.՝ մոդելավորման հետևյալ չորս տարբերակները՝ *karrama* > *KaRr,aMa* (*Fa*Ḷ<sub>i</sub>*aLa*), > \**KaRRaMa* (*Fa*Ḷ<sub>i</sub>*LaLa*), > \**kaRRaMa* (*ka*F<sub>5</sub>*aLa*), > \**KarRaMa* (*Fa*r<sub>5</sub>*aLa*):

Վերացարկման միջոցով մոդելավորման նման ընթացակարգը, որում փաստորեն ներկայացվում է բառաձևի ձևաբանական կառուցվածքը՝ որպես (ստուգաբանական արմատի) իրացման համար բաց՝ արմատական (*F*Ḷ), ինչպես նաև լրացուցիչ (*zā'id*) դիրքերի ամբողջություն՝ որոնց իրացման հնարավորությունը սահմանակալվում է *'al-yawma tansā-hu/at-tad'īf* դասով, արաբագիտական ավանդույթն անվանում է *կաղապար*, արաբական ավանդույթը՝ (*ālā*) *wazn*:

Մոդելավորման երրորդ ու վերջին՝ *բառային շերտը*, ապահովում է կաղապարի բառային նույնականացման խնդիրն ու ավանդույթում դիտարկվում որպես *harf 'ašlī* արմատական միավորների հնչույթային իրացում (ստուգաբանական արմատի կամ հիմնական ձևույթի տեղադրում՝ որպես *արմատական հարֆերի* հաջորդականություն):

Մոդելավորման այս երեք շերտերի հիմքի վրա էլ ատենախոսությունում հստակեցվում են *binā'* (*al-kalima*)՝ *բառահիմք* հասկացության բովանդակային սահմանները: Այն ընկալվում է որպես արմատական հարֆերի միևնույն հաջորդականությունը կամ ավելի շուտ ստուգաբանական նույն արմատն (*'ašl*) ու ձևաբանական որոշակի նույնական կառուցվածք/կաղապարը (ներկայացված *wazn* հասկացության միջոցով) պարունակող անփոփոխ բառահատված՝ տրված ֆերականական ձևերի շարքում: Բառահիմքի բաղկացուցիչ վանկաչափական, ձևաբանական կամ բառային շերտերի

ցանկացած փոփոխություն ավանդույթում հանգեցնում է նոր բառահիմքի, հետևաբար՝ նոր բառաձևի ստեղծման:

Ձևաբանական վերլուծության նման *բայլբային մոդելը*, երբ մոդելի յուրաքանչյուր հաջորդ բաղադրիչ կառուցվում է նախորդի հենքի վրա, իսկ բաղադրիչների տեսական իմաստավորումը կատարվում է «մնացորդային կամ մնացուկային/նեգատիվ» սկզբունքի վրա, մեթոդաբանական կարևորագույն տարր է արաբական ավանդույթի համար: Այսօրինակ մոտեցման «օբյեկտիվ հիմնավորվածությունը» հստակ նկատելի է ավանդույթի վաղ շրջանում ու պայմանավորված է նկարագրության ենթակա տվյալների շտեմարանի հստակեցման, ինչպես նաև «էլակետային նկարագրական մոդել» կառուցելու հանգամանքով:

Ատենախոսության **ԵՐԿՐՈՐԳ՝ «ԲԱՌԱՀԻՄՔԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՈՒՄ»** գլխում նախ՝ անվանական, ապա՝ բայական հիմքերի օրինակի վրա ցույց է տրվում աշխատանքում առաջ քաշված ձևաբանական նկարագրության փայլալի մոդելի կառուցման ընթացքը ԱԼԱ-ում:

Ձևաբանական վերլուծության մոդելը ավանդույթի վաղ շրջանում, ըստ էության, լեզվական միավորների (որպես օբյեկտների) դասակարգման կամ, ավելի շուտ, լեզվաբանական (նկարագրական) դասերում խմբավորման մի տեսակ է, երբ ձևաբանական միջոցները կամ հասկացությունները դասակարգման համար անհրաժեշտ ցուցիչների/հատկանիշների դերում են (*մոդելավորող դասակարգում*): Այդպիսի ցուցիչների խմբերն էականորեն տարբեր են ավանդույթի տարբեր փուլերում, ինչը պայմանավորված է ավանդույթի զարգացման ներքին տրամաբանությամբ կամ լեզվաբանական գիտելիքի կուտակման ու ընդլայնման հանգամանքով: Արդյունքում ստացվում են վերլուծական տարբեր համակարգեր ԱԼԱ-ի տարբեր ժամանակահատվածի աշխատությունների համար, որոնցում թեև օգտագործվում է նույն գործիքակազմը, սակայն տարբեր համակարգային նշանակությամբ:

Առաջին ենթաբաժնում քննվում է մոդելավորող դասակարգման սիբավեհյան օրինակը: ԱԼԱ-ի վաղ շրջանին պատկանող ձևաբանական վերլուծության այս մոդելում լեզվական միավորները ներհաշարադրյալ հաջորդական ցուցիչների օգնությամբ խմբավորվում են հետևյալ դասերում.

1. հարֆերի ֆանակ բառաձևում (*kalim*)՝ մեկից մինչև յոթահարֆ բառաձևեր դասերով,
2. բառաձևեր, որոնք *mutamakkin/mutaşarrif* են՝ ձևաբանական վերլուծության ենթարկվող *al-'asmā' wa-l-'afāl* դասերով, և բառաձևեր, որոնք այդպիսին չեն (*ğayru-hā*): Այս երեք դասերից յուրաքանչյուրի համար ավանդույթն առանձնացնում է նկարագրական առանձին մոդուլ:
3. *mutamakkin/mutaşarrif* գնահատված բառաձևերի համար ներմուծվում է հարֆերի ձևաբանական գործառույթի սկզբունքը (*harf 'aşl/zā'id*), ըստ որի տարանջատվում են պարզ արմատական (*mujarrad*) և ընդարձակված (*mazīd fi-hi*) բառահիմքեր:

Նկարագրության հաջորդ փուլերում ցուցիչները համադրվում են միմյանց հետ, ինչը թույլ է տալիս ունենալ խաչանկվող դասեր:

Դասակարգման կամ լեզվաբանական նկարագրման այս տարբերակն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են «նկարագրական էլակետային մոդել» ստեղծելու խնդրով:

Նախ՝ այն, ինչ ժամանակակից արաբագիտությունն ընկալում է որպես ձևաբանական վերլուծություն, Սիբավեհը դիտարկում է որպես օբյեկտների (տվյալ դեպքում՝ բառաձևերի) խմբավորում (կառուցվածքայնացում/ստրուկտուրիզացիա) որոշակի դասերում: Դասակարգման ընտրված այս մոդելն իր էությամբ դիմամիկ է օբյեկտների բազմությունը հստակեցվում է դասակարգման ընթացքում ժամանակ առ ժամանակ ներմուծվող նոր ցուցիչների միջոցով, իսկ

Սիբավեյհը «պայմանականորեն ազատ» է իր մոդելում նոր ցուցիչների, ասել է թե ձևաբանական նոր միջոցների ներառման ու ձևաբանական նոր հասկացությունների ստեղծման հարցում: Այս հանգամանքի հետ է կապված Սիբավեյհի մոդելը վերագրական լեզվաբանության շարժում ընդգրկելու արաբագիտական ձգտումը:

Բացի դրանից՝ դասակարգումը հիերարխիկ է. նկարագրական յուրաքանչյուր դաս հենվում է մինչ այդ առանձնացվածների վրա, իսկ նոր դասերում հայտնվում են միայն այն օբյեկտները, որոնք արդեն «մնացուկային» են նախորդների նկատմամբ: Ընդ որում՝ յուրաքանչյուր դաս անպայմանորեն նշավորվում է փակ լինելու և նոր օբյեկտներով արդեն լրացվելու անհնարինության պնդումով, ինչը հիերարխիկ դասակարգման էական բաղադրատարր է:

Նման հիերարխիկ-դինամիկ դասակարգումը, որը հայտնի է Սիբավեյհի ուսուցիչներից՝ Ալ-Խալիլի իբն Ահմադին (*al-Xalīl ibn Aḥmad*, մահ. 160/776 կամ 175/791) վերագրվող *Kitāb al-'ayn* բառարանից, կարևորագույն մեկ առավելություն ևս ունի. այն ավելի քան հարմարեցված է այնպիսի նյութի վերագրական (պրեսերիպտիվ) կառուցվածքայնացման համար, որի ծավալը մինչ դասակարգումն անհայտ է: Սիբավեյհի դեպքում նման սկզբունքը թույլ է տալիս լեզվաբանական նկարագրությանը զուգահեռ ստանալ նաև նկարագրությանը ենթակա օբյեկտների բազմությունը, այլ կերպ՝ ստեղծել տվյալների շտեմարան (կորպուս):

**Երկրորդ ենթագլուխ.** ատենախոսությունում վերոշարադրյալ մոդելը վերլուծվում է անվանական ընդարձակված հիմքերի դասակարգման օրինակի վրա: Սիբավեյհն օգտագործում է բառահիմքերը՝ ըստ լրացուցիչ միավորների դիրքերի ու քանակի՝ դասերում խմբավորման սկզբունքը: Հիերարխիկ դասակարգման, խաչածնվող դասերի ու օբյեկտների մնացուկային ընդգրկման սկզբունքը թույլ է տալիս տասը լրացուցիչ միավորներից (*ḥarf zā'id*) նկարագրության համար օգտագործել միայն յոթը և կրկնավորումը (1. *al-hamza* - 40 կաղապար, 2. *al-'alif* - 145 կաղապար, 3. *al-yā'* - 51 կաղապար, 4. *an-nūn* - 13 կաղապար, 5. *at-tā'* - 16 կաղապար, 6. *al-mīm* - 14 կաղապար, 7. *al-wāw* - 25 կաղապար, 8. *at-taḍ'īf* - 28 կաղապար):

Դասակարգման ընթացքում անվանական հիմքերի բազմության (կորպուսի) հատկեցումը զուգակցվում է լեզվաբանական նկարագրության առավել մանրամասնված տարբերակով՝ դասերում ընդգրկված միավորների լրացուցիչ ներքին ինդեքսավորման միջոցով, ինչպես օրինակ՝ անվանական բառահիմք որպես առարկայի անուն, անվանական բառահիմք որպես հատկանիշ, անվանական բառահիմք որպես բայանուն, անվանական բառահիմք որպես իգական անուն, անվանական բառահիմք որպես հոգնակի անուն և այլն:

Դասերը (լեզվական միավորների բազմությունը) և դասակարգումը (միավորների նկարագրումը) ամբողջականացնելու Սիբավեյհին օգնում է հաջորդական բացառման սկզբունքը. նախ՝ բացառվում է դասում նոր օբյեկտներ հայտնվելու հնարավորությունը, ապա, հետևելով բառարանագրական ավանդույթին, բացառվում է տվյալ դասը անվանական նոր բառահիմքերով համարելու հնարավորությունը (*wa-lā na'lamu fī l-'asmā' wa-ṣ-ṣifa 'alā yufilin wa-lā ṣay' min ḥāqā n-naḥw lam naḍkur-hu*): Այնուհետև թվարկվում են տվյալ դասում տեսականորեն հնարավոր, բայց լեզվում «չիրացված» բառահիմքերը (*wa-laysa fī l-kalām yaf'ālun wa-lā yuf'ūlun*), ապա՝ տվյալ դասում հայտնվում է հղում նախորդ բոլոր այն դասերին, որոնք կարող են տվյալ դասի համար ռելեվանտ օբյեկտներ մատակարարել (*wa-qad bayyannā lahāqa-hā tālītatan fī-mā maḍā min al-fuṣūl bi-tamtūl binā'ī mā hiya fī-hi*):

Դասերն ամբողջականացնելու «բառարանագրական» հայտնի այս մոտեցումը մեկ հեռանկար ևս ունի. այն թույլ է տալիս Սիբահեյվին նախ՝ նկարագրության առանձին հատվածներն ինտեգրել միմյանց՝ մեկ ընդհանուր մոդելի սահմաններում, և ապա՝ վերջինս գնահատել որպես լեզվական

իրողության արտացոլում, ընդ որում՝ այնպիսի, որն ավելի ընդգրկուն է, քան լեզվական իրողությունը, և նկարագրական չիրացված պահուստ ունի:

**Երրորդ ենթագլուխ.** անվանական հիմքերի նկարագրությունն սկզբունքային այլ հիմքերի վրա է ավանդույթի ու շրջանում, որտեղ թեև զուգահեռ են նկարագրությունն ու դասակարգումը, բայց վերջինս այլևս դիմամիկ չէ այն իմաստով, որ նկարագրման ենթակա օբյեկտների (բառահիմքերի) բազմությունն արդեն հայտնի է, իսկ 4/10-րդ դդ-ից հետո՝ նաև փակ ընդլայնման համար:

Նման մոտեցումը նկարագրության «տեսականացման» էականորեն լայն հնարավորություններ է ընձեռում, քանի որ այլևս գերակա չէ «էականային մոդել» ստեղծելու խնդիրը: Արդյունքում պահպանվում է ձևաբանական նկարագրության միջոցների հիմնական գործիքակազմը՝ լրացուցիչ միավորների ֆանակն ու դիրքերը բառահիմքում, իսկ խաչաձևվող դասերի սկզբունքը նախ՝ Ազ-Ջամախշարիին, ապա՝ Իբն Յախյին թույլ է տալիս նկարագրական համակարգին ինտեգրել լրացուցիչ միավորների (*ḥarf zā'id*) նոր՝ *muftariq* և *mujtami'* տեսակները:

Վերջին երկու հասկացությունների համակարգային էությունը մեկնաբանելու համար, նախ պիտի ընդունել, որ լեզվական միավորների արտահայտության պլանը ԱԼԱ-ում ներակա աֆսիոմատիկ կերպով ընկալվում է որպես հարձեղի գծային հաջորդականություն, որում հնարավոր է ոչ արմատական միավորների տեղաբաշխման՝ առանց բացառության բոլոր հնարավորությունների տրամաբանական թվարկում:

Արաբ ֆերականներից «ժառանգելով» անվանական բառահիմքերի վերջնական բազմությունը (փակ կորպուսը)՝ Ազ-Ջամախշարիին, ապա նաև Իբն Յախյը դրանց նկարագրման (դասակարգման) համար կիրառում են ցուցիչներ, որոնք տեսականորեն հնարավոր են միայն նկարագրման ենթակա օբյեկտների փակ բազմության գոյության դեպքում: Նման ցուցիչների դերում բառահիմքում ոչ միայն «*ḥarf zā'id*-ների ֆանակն ու արմատական՝ *FSL* դիրքերից առաջ, միջև կամ հետո տեղակայման հնարավորությունն է», այլև դրանց՝ արմատական միավորներով «ընդհատվելու» (*muftariq*) կամ անմիջականորեն միմյանց հաջորդելու (*mujtami'*) հանգամանքը:

Ածանցների դասակարգման նմանատիպ սկզբունք օգտագործում է նաև «ժամանակակից» ձևաբանությունը՝ առաջարկելով *ընդհատ* և *անընդհատ* ածանցների կամ արմատների հասկացությունները (Ի.Ա. Մելչուկ, Վ.Պ. Ստարիմին): Հ.Մ. Գաբուլյանը մեկնաբանման նույնպիսի հնարավորություն է տեսնում նաև արաբական ավանդույթի *az-zā'idatān muftariqatān* (երկու *ընդհատ zā'id-ներ*) կամ *az-zā'idatān mujtami'atān* (երկու *անընդհատ zā'id-ներ*) հասկացությունների դեպքում: Սակայն, ինչպես նշվում է աստենախոսությունում, արաբական ավանդույթը մեկնաբանման նման հիմքեր չի տալիս, քանի որ ի համեմատ ձևաբանական ժամանակակից մոդելների՝ տարբեր են լեզվական միավորների արտահայտության և բովանդակության պլանների փոխարաբերությունները տեսականացնող պատկերացումները համեմատվող համակարգերում:

Արաբական ավանդույթում *muftariqatān*, *mujtami'atān* միավորները թեև *ընդհատ* են կամ ոչ, սակայն ոչ թե որպես մեկ ֆունցիոնալ միավորի ընդհատված բաղադրիչներ (միայն այս դեպքում դրանք հնարավոր կլինեին դիտարկել որպես ընդհատ ածանցներ), այլ երկու կամ երեք անջատ *zā'id-*ներ, որոնք բառահիմքի գծային հոսքում կամ առանցքված են արմատական միավորներով, կամ հաջորդում են միմյանց արմատական դիրքերից առաջ, միջև կամ հետո. *muftariq*, *mujtami'* միավորներն ընդհատ կամ անընդհատ են ամբողջական բառահիմքի սահմաններում:

**Չորրորդ ենթագլուխ.** ֆննվում են բայահիմքերի հիերարխիկ-դիմամիկ դասակարգման մոդելի առանձնահատկությունները ԱԼԱ-ում: Նշվում է, որ վերջիններիս նկարագրությունը (դասակարգումը) արաբական ավանդույթը դիտարկում է նախ և առաջ որպես բայական թեման համակարգի (*tašarruf*) կառուցում: Դասակարգման սկզբունքները, որոնք կիրառվում են անվանական հիմքերի դեպքում, պահպանվում են նաև այստեղ, չնայած այլ է նկարագրական դասերի ներքին

ինդեֆավորման համակարգը: Այն ներկայանում է որպես բայական (բառակազմական/բառափոխական) հարացույցների հաջորդական ներմուծում, ինչը, պայմանավորված նկարագրության դինամիկ մոդելով, կոչված է լուծելու նաև նկարագրվող նյութի հնարավորինս լայն ընդգրկման խնդիրը:

Պարզ արմատական (*mujarrad*) բայահիմքերի սիբավեհյան նկարագրության ընթացքում հարացույցները կազմվում են ըստ ֆորմալ (ներկա անկատարի բայահիմքի միջին ձայնանիշ, հարացույցների տարբերակային ձևեր, բայանվան կաղապար և այլն) և իմաստաբանական (անցողիկ կամ անանցողիկ հարացույցներ, հարացույցներ՝ ըստ բառ-իմաստային խմբերի և այլն) ցուցիչների: Ընդ որում՝ նկարագրական ավելի ուշ շրջանի մոդելներում՝ «եյակետային այս մոտեցումը» կրկնվում է ոչ միայն բացատրությունների, այլև կոնկրետ օրինակների տեսքով: Սա ընկալելի է ինչպես Ա.Ա.-ում լեզվաբանական գիտելիքի ժառանգականության, այնպես էլ նկարագրման ենթակա տվյալների փակ բազմության հանգամանքներով՝ հաշվի առնելով նաև այն, որ վաղ շրջանի «եյակետային մոդելի» կառուցվածքն ու նկարագրման ենթակա նյութի ընդարձակությունն ուղիղ համեմատական էին միմյանց: Այս վերջին հանգամանքը Ա.Ա.-ի ուշ շրջանում վերատառվում է միայն մասնակիորեն:

Ընդարձակված (*mazīd fi-hi*) բայահիմքերի դեպքում հարացուցային ինդեֆավորումը երկրորդական պլանում է պայմանավորված հարացույցների համեմատաբար կանոնավոր բնույթով: Սակայն, պահպանելով ձևաբանական վերլուծության արդեն հայտնի միջոցները, դասակարգման մնացուկային ու նեգատիվ սկզբունքներն ավանդույթն այս դեպքում կոնցեպտուալացնում է *'ilhāq* հասկացության շրջանակներում, որում ներառված է նմուշային կաղապար-հարացույցների գաղափարն ու նկարագրական հնարավորինս նվազագույն մոդել ունենալու ձգտումը:

*'ilhāq* հասկացության ընդհանուր տրամաբանությունը, որոշակի մետատեսական նախապայմանների պահպանման դեպքում, որոնց առաջադրումը կապված է նկարագրական մոդելում ոչ հակասական ու ճշգրտման հնարավորություն ընձեռող (*ṣawāb*) ինտեգրումներ ապահովելու հանգամանքի հետ (նորմի հարաբերականություն, նորմից շեղումների աստիճանականություն), ատենախոսությունը վերլուծում է որպես հարացուցային նկարագրության սկզբունքը տեսական մեկ աստիճանով վեր բարձրացում: *'ilhāq*-ն այս դեպքում մի միջոց է, որը նմուշային կաղապար հարացույցների գաղափարն օգտագործում է նկարագրությունն անդադար «շմանրացնելու» համար ու ինչ-որ մի աստիճանում ապահովում «դադար տալու» հնարավորություն: Բացի դրանից՝ այն թույլ է տալիս նկարագրական նորմատիվ մոդելը տարածել բառաֆոնդի «ոչ սկստիվ» (*ḡarābat, ṣawādd, nawādir*) այն հատվածի վրա, որի վրա չէ, որ կառուցվել է մոդելը: *'ilhāq* հասկացության նկարագրական արժեքի գիտակցումը ավանդույթի ուշ շրջանում այն վերածում է հիմնաբարային միջոցի, որի շուրջ և կառուցվում է ձևաբանական վերլուծության ողջ համակարգը:

Ա.Ա.-ի ձևաբանական վերլուծության մոդելների հիմքում ընկած մեթոդաբանական լուծումները (այսպես կոչված «տրամաբանությունը») բնկվում են ատենախոսության **ԵՐԲՈՐԴ՝ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ** գլխում, որտեղ առաջադրվում է հետևյալ հիմնական խնդիրը. վեր հանել Ա.Ա.-ի ձևաբանական նկարագրման գործիքակազմի փոփոխության ու լեզվաբանական գիտելիքի գոյության տարբեր փուլերի միջև պատճառահետևանքային կապը՝ այն դիտարկելով առանձին հասկացությունների բովանդակային զարգացման մեջ:

Սզբնաղբյուրային հիմք ծառայում է Իբն Ջինիի (մահ.՝ 392/1002) մեկնաբանությամբ (*al-Munshif*) Աբու Օսման ալ-Մազինիի ('Abū 'Utmān Bakr ibn Muḥammad ibn Bāqiya al-Māzinī, մահ. 248/862) *at-taṣrīf* աշխատությունը: Ընտրությունը հիմնավորվում է նրանով, որ *at-taṣrīf*-ը ժամանակագրորեն ընդգրկում է Ա.Ա.-ի այն շրջանը, երբ այն ոչ միայն «նկարագրական բազմազանության» փուլում է, ինչը հնարավորություն է ընձեռում նույն հասկացության մի ֆանի մեկնաբանություններ վեր հանել ու

դրանց համադրության միջոցով դիտարկել վերջիններիս կապող օղակը, այլ նաև ավանդույթի նորմավորման փուլում է, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս տեսնել առկա բազմազանությունից նորմայի ընտրության, ու այդ ընտրության հիմնավորման (*al-'ilal*) ընթացքը: *at-taṣṛīf*-ի ընտրությունը կարևոր է նրանով, որ այն առաջարկում է ձևաբանական սիբավեյհյան մոդելին գրեթե ժամանակակից ու նույնօրինակ ամբողջական զուգահեռ մեկ այլ մոդել, որոնք որպես բաղադրիչ մոդուլներ համադրվում են ԱԼԱ-ի ուղ շրջանի աշխատություններում: Ատենախոսությունում մեթոդաբանական նման մոտեցման հետևողականությունը պահպանելու համար ներառվում են նաև Իբն Յախյա (մահ.՝ 643/1245) մեկնաբանությամբ (*Šarḥ al-mufaṣṣal*)՝ Ազ-Ջամախշարիի (մահ.՝ 538/1144) *al-Mufaṣṣal fi 'ilm al-'arabiyya*, և Ալ-Աստարաբադիի (մահ.՝ 688/1286) մեկնաբանությամբ (*Šarḥ šāfiyat Ibn al-Ḥājjib*)՝ Իբն ալ-Հաջիբի (մահ.՝ 646/1248-9) *Šāfiya* աշխատությունները:

Գլխի առաջին հատվածում ներկայացվում են ԱԼԱ-ում ձևաբանական նկարագրման միջոցների համակարգման եղանակները: Ավանդույթի ուղ շրջանը հատակ տարանջատում է *իմաստակիր* (*li-'ifādat ma'nā lam yakun qabla*) և *ոչ իմաստակիր* (*ziyāda li-'ilhāq binā' bi-binā'in ḡayra-hu, ziyādat binā' faqat*) ածանցման միջև: Նման տարանջատումը ներակա է նաև Սիբավեյհի մոդելում՝ ենթադասված, սակայն, տեսական այլ խնդրի լուծմանը:

Իմաստակիր ձևաբանական միջոցների վերլուծության համար ատենախոսությունն առաջարկում է *դիսկրետ իմաստ* (*ma'nā*) և *ածանցում* (*ziyāda*) հասկացություններում երկուսական բաղադրիչների տարանջատում: *ma'nā*-ն ավանդույթում ընկալվում է հենվելով կա՛մ բառակազմական պրոցեսների (*az-ziyāda li-'ifādat ma'nā lam yakun qabla*), կա՛մ էլ բառերի անվանողական գործառույթի, ասել է թե՛ ձև-բովանդակություն կապի հենքի վրա (*az-ziyāda li-l-ma'nā*): Ածանցումն (*ziyāda*) ավանդույթում հստակեցվում է կա՛մ բառակազմական *taṣṛīf/ištiqāq* համակարգում, կա՛մ էլ մետատեսական շրջանակում համընդհանուր փոխզիջման արդյունք է: Բաղադրիչների նման ընկալումը ԱԼԱ-ում թույլ է տալիս ունենալ իմաստակիր ածանցման աստիճանական համակարգ՝ առավել նորմավորվածից դեպի նվազ նորմավորվածը: Ատենախոսությունում առանձին բնարկման առարկա է անցման այդ մեխանիզմը:

Նույն գլխի երկրորդ հատվածում բնվում է ոչ իմաստակիր ածանցումը, որն ավանդույթում կոնցեպտուալացվում է *'ilhāq* (բառացիորեն՝ կցում) հասկացության սահմաններում: Այն առաջարկում է բառակազմության/ածանցման գեներատիվ կանոններ՝ <sup>1</sup>[*karrarta al-lām (fi-hā)*] <sup>2</sup>[*li-tulḥiqa bi-*] <sup>3</sup>[*binā' dahraja*], որոնք արտահայտության պլանում կանոնավոր (ռեգուլար), ասել է թե՛ արդյունավետ (պրոդուկտիվ) են (*wa dālika qiyās muṭṭarid la-ka 'an taqūla min ḡaraba ḡarbaba*), ինչը չի կարելի պնդել ածանցման բովանդակային պլանի մասին: Ընդ որում՝ գեներացվում է ոչ թե մեկ բառածև (անվանվում է կցված՝ *mulḥaq*), այլ բառածևների ամբողջությունը՝ նմուշային կաղապար հարացույցի (անվանվում է *mulḥaq bi-hi*) հենքի վրա:

Քացի դրանից՝ ածանցման *'ilhāq* համակարգն ավանդույթում հիմնված է բառահիմքում հարֆերի ֆանակի հաշվարկի վրա, որը (ընդարձակված) եռահարֆ հիմքերը նկարագրում (գեներացնում) է ֆառահարֆ (պարզ և ընդարձակված), (ընդարձակված) ֆառահարֆերը՝ հնգահարֆ (պարզ և ընդարձակված), (ընդարձակված) հնգահարֆերը՝ վեցահարֆ (պարզ և ընդարձակված) նմուշային կաղապար-հարացույցների հենքի վրա: Կաղապար հարացույցների կառուցվածքը, իհարկե, տարբեր է անվանական և բայական հիմքերի համար, գեներացման կանոնների համակարգը (երկուսական՝ *Sībawayhi/Ibn Ya'īs*-ի և *al-Astarābādī*-ի տարբերակներով)՝ մասնակիացված ու մանրամասնված (հմմտ.՝ *'idḡām, ḥarf al-'ilhāq* հասկացությունները):

Ոչ իմաստակիր ածանցման *'ilhāq* համակարգում առանձնակի կարևորություն է ձեռք բերում *իմաստ* կամ ավելի շուտ (*լեզվական*) *նշանակություն* հասկացության մեկնաբանումը: Ալ-Աստարաբադին ելնում է *նշանակություն* ավելի ընդհանրական՝ *ḡaraḍ* (ներհամակարգային,

վերլուծական նպատակ, գործառույթ) հասկացությունից, որը մեկնաբանում է երկակի՝ որպես *al-ğaraḍ al-ma'nawī* (իմաստային գործառույթ) կամ էլ՝ *al-ğaraḍ al-lafzī* (արտահայտության պլանի հետ կապված կամ նշանային գործառույթ):

Առաջին հասկացությունը փոխկապված է լեզվական երևույթի կանոնավոր պարբերականությամբ հանդես գալու (*ռեգուլարություն, 'ittirad*) պատկերացումների հետ, ինչը թույլ է տալիս, օրինակ, միևնույն *ḥarf zā'id*-ին տարբեր բառահիմքերում վերագրել ինչ-որ կոնկրետ ու անընդհատ կրկնվող *դիսկրետ նշանակություն (ma'nā)*: Արդյունքում ածանցումը կամ *ḥarf zā'id*-ը իմաստակիր է (*al-ğaraḍ al-ma'nawī*):

Դիսկրետ նշանակության կանոնավորության բաղադրիչի բացառումն այս սխեմայում (*bal yakfi 'an lā takūna tilka z-ziyāda muṭṭaridatan fi 'ifādat ma'nā*) Ալ-Աստարաբադիի մոտ ածանցումը (*ziyāda*) վերածում է ոչ իմաստակիրի՝ թեև այն կրկին համարում է ֆունկցիոնալ առումով ծանրաբեռնված (նշանակակիր): Այսինքն՝ նկարագրական մոդելը ոչ կանոնավոր դիսկրետ նշանակությունը գնահատում է զուտ արտահայտության պլանում՝ նշանակություն, որը ստեղծում է նոր լեզվական նշան կամ նոր բառահիմք (*al-ğaraḍ al-lafzī*):

Նույն գլխի երրորդ հատվածում՝ 'ilhāq հասկացության հիմքերն ատենախոսությունը ներկայացնում է հոգեվեզվաբանական և կոնգրիտիվ լեզվաբանական մոտեցումների դիտանկյունից: Խնդրի բննարկումը տարանջատում է երեք հատված՝ լեզվական միավորների նմանության/տարբերության մասին պատկերացումները ԱԼԱ-ում, լեզվական միավորները միմյանց կամ մեկը մյուսի հետ համեմատության մեխանիզմները որպես սիմետրիկ/ասիմետրիկ նմանություն և կոնտեքստի ադեցությունը մոդելի կառուցման վրա:

Ատենախոսությունն առաջարկում է ավանդույթի մոդելավորման համակարգը (*wazn*) դիտարկել որպես նկարագրվող օբյեկտների (*kalim*) միջև նմանությունները հաշվի առնող ցուցիչների (ձևաբանական միջոցների) հիմքի վրա կատարվող դասակարգում: Այս դեպքում, օբյեկտների դասակարգումն ու դրանց ձևաբանական նկարագրությունը՝ որպես լեզվաբանական մոդելի բաղկացուցիչներ, զուգահեռ են, իսկ ցուցիչները և դասերը ոչ միայն ուղիղ համեմատական են միմյանց, այլև փոխկապակցված են մոդելում այս կամ այն ֆանակությամբ օբյեկտների ներառման խնդրին:

Բացի դրանից՝ ատենախոսությունն առաջարկում է դասակարգման (նկարագրական մոդելի) և դասերում ներառվող միավորների միջև կապի երկակի մեկնաբանում:

Դասակարգումը նախ *ածանցյալ (դերիվատիվ)* է խմբավորման ենթակա օբյեկտների միջև նմանության հանգամանից, այսինքն՝ նմանության մասին պատկերացումները հարաբերական են այն համատեքստի շրջանակում, որտեղ դրանք դիտարկվում են:

Օբյեկտների միջև նմանությունը հարաբերական է նաև այնքանով, որքանով հենց դրանք, և ոչ թե օբյեկտների միջև տարբերություններն են նշավորվում (*marked*) ու վերածվում ձևաբանական նկարագրության միջոցի: Հարաբերական է նաև օբյեկտների նմանության ուղղությունը՝ կախված նրանից, թե օբյեկտները նման են միմյանց (սիմետրիկ նմանություն), թե՛ մեկը մյուսին (ասիմետրիկ նմանություն):

Բացի այդ՝ օբյեկտների միջև նմանությունը փոփոխական է այնքանով, որքանով միևնույն օբյեկտները տվյալ կոնտեքստից դուրս կարող են այլևս նման չդիտարկվել, այն իմաստով, որ նմանությունը ֆիքսող այս կամ այն ցուցիչը կարող է այլևս էական (ռելեվանտ) շինել այլ կոնտեքստում (դասակարգման կոնկրետ փուլում):

Նմանության հարաբերականությունն ու փոփոխականությունը երկատային այն սկզբունքներ են ու կոնտեքստուալ այն միջավայր, որոնք պայմանավորում են ոչ միայն դասակարգման

(լեզվաբանական մոդելի կառուցման) ընթացքը, այլև՝ ելքը, սա ստեճախոսությունում անվանվում է *կոնստրաստի ազդեցություն*:

Ատեճախոսությունում քննարկվում է նաև օբյեկտների միջև նմանության ընկալման այսպես կոչված «սուբյեկտիվ» գործոնը՝ դասակարգման ժամանակ ընտրվող պահվածքի քենոմենի մասին հոգելեզվաբանական պատկերացումների ներգրավմամբ՝ այն ընդգրկելով նաև ԱԼԱ-ի լեզվաբանական նկարագրության համակարգը որպես նկարագրական-դետերիպտիվ, վերագրական-պրետերիպտիվ, բացատրական, սերող-գեներատիվ ներկայացնելու արաբագիտական քննարկումների շրջանակում:

Դասակարգումը *կաուզալ* (պատճառական) է այն դեպքում, երբ ինքն է թելադրում, թե որ օբյեկտներն են նման՝ ի տարբերություն վերոնշյալ *ածանցյալ* տարբերակի, երբ նմանության գործոնն է պայմանավորում դասակարգումը:

Վերոնշյալ այս դրույթների՝ լեզվաբանական գիտելիքի հարթություն փոխանցումը թույլ է տալիս ԱԼԱ-ում տարանջատել լեզվական իրողությունը լեզվի նկարագրման համակարգի վերածման երկու հիմնական փուլ՝ նկարագրական «ելակետային մոդելի» ստեղծման փուլ ավանդույթի վաղ շրջանում, և՛ արդեն առկա մոդելի տեսականացման ձգտում ավանդույթի ուշ շրջանում՝ համակարգի նորմավորման միջանկյալ փուլով: Պնդումը ստեճախոսությունում դիտարկվում է բայական հիմքերի նկարագրման/դասակարգման *դինամիկ* (ածանցյալ-կաուզալ) և *ոչ դինամիկ* (կաուզալ) մեխանիզմների վրա:

Դասակարգման առաջին՝ *դինամիկ* (ածանցյալ-կաուզալ) տարբերակը ստեճախոսությունում քննվում է Սիբավեյնի մոտ անվանական, ապա նաև բայական հիմքերի ձևաբանական վերլուծության օրինակի վրա: Նշվում է, որ դասակարգումն իր կառուցվածքով քայլային է, հիերարխիկ՝ հիմնված օբյեկտների ընդգրկման մնացուկային/նեգատիվ սկզբունքի վրա, իսկ քայլերից յուրաքանչյուրը տարանջատում է դասակարգման համար էական (ռեկլեվանտ) և ոչ էական նմանություններ ֆիքսող ցուցիչներ (ձևաբանական միջոցներ): Սա նշանակում է, որ դասակարգման յուրաքանչյուր հաջորդ քայլը բացառում է ոչ միայն նախորդ դասում ընդգրկված/նկարագրված միավորները, այլև այն ցուցիչները, որոնք ռեկլեվանտ էին դասի ստեղծման համար: Նոր դասի ստեղծման համար արդեն ոչ ռեկլեվանտ ցուցիչները Սիբավեյնը, սակայն, պահպանում է որպես նկարագրական միջոցներ: Սա թույլ է տալիս պնդել, որ չնայած դասակարգումը և նկարագրությունը Սիբավեյնի մոտ զուգահեռ են, սակայն մեթոդական երկու տարբեր հարթություններում, որոնցից յուրաքանչյուրը յուրօրինակ խնդիր է լուծում, համապատասխանաբար, վերագրական՝ ուղղված գործիքակազմի ու օբյեկտների հստակեցմանը, և ապա՝ նկարագրական/բացատրական:

Ըստ քայլերի հաջորդականության՝ Սիբավեյնը հստակեցնում է նկարագրման ենթակա բազմությունը որպես 3 պարզ եռահարֆ (*FaʕaLa, FaʕiLa, FaʕuLa*), 1 պարզ քառահարֆ (*FaʕLaLa*), 24 ընդարձակված եռահարֆ (*ʕaʕaLa, FaʕaLa, FaʕiʕaLa; taʕaʕaLa, taʕaʕiʕaLa; inʕaʕaLa, iʕaʕaLa, istaʕaLa, iʕʕaL, iʕaL, iʕʕawʕaLa, iʕʕawʕaLa; FaʕL, aʕa, FawʕaLa, FayʕaLa, FaʕwaLa, FaʕLā, FaʕnaLa, taʕaʕLā, taʕayʕaLa, taʕaʕwaLa, tamaʕaLa, iʕʕanL, aʕa, iʕʕanLā*) և 3 ընդարձակված քառահարֆ (*taʕaʕLaLa, iʕʕanLaLa, iʕʕaLaL, a*) բայահիմքեր, որոնք նկարագրում է հետևյալ ձևաբանական դասերում ու ենթադասերում՝

1. *lahāq az-ziyāda banāt at-talāta min al-fiʕl - ʕaʕaLa, FaʕaLa, FaʕiʕaLa, taʕaʕaLa, taʕaʕiʕaLa,*
2. *mā taskunu ʕawāʕu-hu min al-ʕafāl al-mazīda - inʕaʕaLa, iʕaʕaLa, istaʕaLa, iʕʕaL, iʕaL, iʕʕawʕaLa, iʕʕawʕaLa,*
3. *mā laḥiqat-hu az-zawāʕidu min banāt at-talāta wa-ʕulḥiqa bi-banāt al-ʕarbaʕa*
  - 3.1. *mullḥaq bi-DaḤRaJa - FaʕL, aʕa, FawʕaLa, FayʕaLa, FaʕwaLa, FaʕLā, FaʕnaLa,*
  - 3.2. *mullḥaq bi-taDaḤRaJa - taʕaʕLā, taʕayʕaLa, taʕaʕwaLa, tamaʕaLa,*

3.3. *mullḥaq bi-ḤRanJaMa - iFʿanL,aḷ,a, iFʿanLā:*

Այս մոդելում *'ilhāq* հասկացության ինտեգրման տրամաբանությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- որոշ հիմքերում, մյուսների համեմատ, ամբողջական կամ դեֆեկտիվ *taṣrīf/ištiqāq* համակարգերի հարաբերակցությունը,
- եռահարֆ հիմքերի՝ համեմատ՝ ֆառահարֆերի կամ հնգահարֆերի, չնշավորված (*unmarked*) լինելու հանգամանքը,
- *'al-yawma tansā-hu/at-taḍ'if* աֆսիոմատիկ տրված ու անփոփոխ համակարգը,
- ձևաբանական գեներատիվ համակարգը,
- ֆերականական ձևի իմաստակիր կամ ոչ իմաստակիր լինելու հանգամանքը,
- խորհային մակարդակում նմանատիպ ձևերը ելֆային մակարդակում տարբեր կերպ բացատրելու անհրաժեշտությունը՝

*'idḡām<sub>1</sub>* - [Kv-KK,vK<sub>i</sub>] → Kv-KvK<sub>i</sub>K<sub>i</sub> : [maRD,aD<sub>i</sub>] → maRaD<sub>i</sub>D<sub>i</sub> որպես [maFʿ,aL<sub>i</sub>] → maFaʿL<sub>i</sub>

*'idḡām<sub>2</sub>* - [Kv-KvK<sub>i</sub>K<sub>i</sub>] → Kv-KvK<sub>i</sub>K<sub>i</sub> : [MaʿaD<sub>i</sub>d<sub>i</sub>] → MaʿaD<sub>i</sub>d<sub>i</sub> որպես [FaʿaL<sub>i</sub>l<sub>i</sub>] → FaʿaL<sub>i</sub>l<sub>i</sub>

*'ilhāq* - [Kv-KK,vK<sub>i</sub>] → KvKKvK → Kv-KK,vK<sub>i</sub> : [QarD,aḍ<sub>i</sub>] ⇒ JaʿFaR → QaRD,aḍ<sub>i</sub> որպես [FaʿL,aḷ<sub>i</sub>] ⇒ FaʿLaL → FaʿL,aḷ<sub>i</sub>

Ատենախոսությունը բայական հիմքերի նկարագրման/դասակարգման ոչ դինամիկ (*կառուցայ*) մեխանիզմը դիտարկում է ԱԼԱ-ի ուշ շրջանի ձևաբանական նկարագրման մոդելների օրինակի վրա, որտեղ *'ilhāq* հասկացությունը մոդելի բաղադրիչից վերածվել է արդեն հիմնարար այսպիսի հասկացության, որի շուրջ կառուցվում է ձևաբանական նկարագրության ողջ համակարգը:

Սիբավեյնի մոդելին բնորոշ՝ դասակարգման ու նկարագրման զուգահեռականությունն այստեղ վերածվում է նույնականության. նույնական են դասակարգման դաս և նկարագրական դաս հասկացությունները: Վերանում է նաև տարբերակումը ռելեվանտ և ոչ ռելեվանտ ցուցիչների միջև: Ցուցիչները միշտ ռելեվանտ են, տրված նախապես ու ածանցված տվյալների արդեն իսկ հայանի բազմությունից: Խնդիրն ԱԼԱ-ի այս փուլում տրված բազմության խմբավորումն է նկարագրական դասերում, իսկ ցուցիչներն առանձնացվում են ըստ խմբավորման նպատակի: Ընդ որում՝ այսպիսի մեխանիզմի դեպքում առաջարկվող խմբավորումները միմյանցից կարող են տարբերվել միայն այն դեպքում, երբ տարբեր են ցուցիչները (ձևաբանական միջոցները կամ դրանց բովանդակային սահմանները) և/կամ դրանց ֆունկցիան:

Ատենախոսությունն ԱԼԱ-ի այս փուլին բնորոշ ձևաբանական վերլուծության համակարգը դիտարկում ու վերլուծում է Ազ-Ջամախշարիի, Իբն Յախի, Իբն ալ-Հաշիբի և Ալ-Աստարաբադիի ձևաբանական մոդելների համադրության միջոցով (եռահարֆ ընդարձակված բայահիմքերի օրինակի վրա) և պնդում, որ վերջիններս արդյունք են *'ilhāq* հասկացության մեկնության չորս տարբեր եղանակների:

Ազ-Ջամախշարին (մահ.՝ 538/1144) 25 ընդարձակված եռահարֆ հիմքերի բազմությունը դասակարգում է *muwāzana* և *'ilhāq* ցուցիչների օգնությամբ հետևյալ նկարագրական դասերում՝

- *muwāzin li-r-rubā'ī 'alā sabīl al-'ilhāq* (15 բայահիմք՝ *ṢaML,aḷ,a, ḤawQaLa, BayṬaRa, JaHwaRa, QaLnaSa, QaLSā; taJaLB,ab,a, taJawRaBa, taṢayṬaNa, taRaHwaKa, tamaSKaNa, taĠāFaLa, taKaL,ḷ,aMa; iQṢanS,as,a, iSLanQā*),
- *muwāzinu la-hu 'alā ḡayr sabīl al-'ilhāq* (3 բայահիմք՝ *'aXRaJa, JaR,ṭ,aBa, QāTaLa*),
- *ḡayr muwāzin la-hu* (7 բայահիմք՝ *inṬaLaQa, iQtaDaRa, istaXRaJa, iṢHāB,ḷ,a, iṢHaB,ḷ,a, iĠD,aWd,aNa, iṢLaw,ṽ,aṬa*):

*muwāzana* ցուցիչն այս մոդելում ներառում է ոչ միայն նմուշային կաղապար հարացույցների վանկաչափական շերտը, այլև *ḥarf zā'id* միավորի դիրքը կաղապարներից յուրաքանչյուրում: *'ilhāq*

ցուցիչում ներառված է նմուշային կաղապար-հարացույցի հետ *taṣrif/ištiqāq* համակարգի, ներառյալ՝ բայանվան կաղապարի, նույնականության գաղափարը: Դասակարգումը, ամեն դեպքում, զուտ ֆանակային սկզբունքի վրա է, ածանցման իմաստակիր կամ իմաստագրուկ լինելու բաղադրիչն էական (ոելեվանա) չէ:

Իբն Յախը (մահ.՝ 643/1245-6) Ազ-Ջամախարիի մոդելում փորձում է ինտեգրել ածանցման իմաստաբանական բաղադրիչը, ինչի արդյունքում փոփոխվում են *'ilhāq* և *muwāzana* հասկացությունների բովանդակային սահմանները: Թեև համեմատ Ազ-Ջամախարիի՝ նույնն է նկարագրական դասերի ֆանակն ու դրանց անվանումը, այլ է օբյեկտների (23 ընդարձակված բայահիմքերի) տեղաբաշխումը դրանցում (ու նաև դասերի ծավալը)՝

- *muwāzin li-r-rubā'ī 'alā ṭarīq al-'ilhāq* (12 բայահիմք՝ *ŠaML,aI,a, ḤawQaLa, BayṬaRa, JaHwaRa, QaLnaSa, QaLSā; taJaLB,ab,a, taJawRaBa, taŠayṬaNa, taRaHwaKa; iQṬanS,as,a, iSLanQā*),
- *muwāzin la-hu lā 'alā sabīl al-'ilhāq* (3 բայահիմք՝ *'aXRaJa, JaR,r,aBa, QāTaLa*),
- *ḡayr muwāzin* (7 բայահիմք՝ *inṬaLaQa, iQtaDaRa, istaXRaJa, iŠHāB,b,a, iŠHaB,b,a, iĠD,awd,aNa, iṬLaw,w,aṬa*):

Երե՛ *tamaSKaNa, taĠāFaLa* և *taKaL,l,aMa* հիմքերն այլևս հնարավոր չէ գտնել այս մոդելում, ֆանի որ *mullḥaq* ցուցիչի վերաիմաստավորումը որպես «իմաստագրուկ ածանցում», դրանք առկա և ոչ մի դասում ներառելու հնարավորություն չի ստեղծում:

Իբն Հաջիբը (մահ.՝ 646/1248-9), հենվելով Ազ-Ջամախարիի մոդելի վրա (25 բայահիմք), վերջինից բացառում է *muwāzana* ցուցիչը, իսկ *'ilhāq* ցուցիչում ներառում է նմուշային կաղապար-հարացույցի հետ *taṣrif/ištiqāq* համակարգի նույնականության (ներառյալ բայանվան կաղապար) գաղափարը: Ածանցման իմաստաբանական բաղադրիչն այս մոդելում ուղեկցվում է: Նկարագրական դասերը նրա մոտ երկուսն են՝

- *mullḥaq bi-* (15 բայահիմք՝ *ŠaML,aI,a, ḤawQaLa, BayṬaRa, JaHwaRa, QaLnaSa, QaLSā; taJaLB,ab,a, taJawRaBa, taŠayṬaNa, taRaHwaKa, tamaSKaNa, taĠāFaLa, taKaL,l,aMa; iQṬanS,as,a, iSLanQā*),
- *ḡayr mullḥaq* (10 բայահիմք՝ *'aXRaJa, JaR,r,aBa, QāTaLa, inṬaLaQa, iQtaDaRa, istaXRaJa, iŠHāB,b,a, iŠHaB,b,a, iĠD,awd,aNa, iṬLaw,w,aṬa*):

Դասերի մեծ ծավալը նկարագրության հնարավորինս մանրամասն համակարգ է ենթադրում:

Ալ-Աստարաբադին (մահ. 686/1287-8), հետևելով Իբն Յախիին, սակայն Իբն ալ-Հաջիբի/Ազ-Ջամախարիի առաջարկած մոդելում ինտեգրում է ածանցման իմաստաբանական բաղադրիչը՝ վերոնշյալ *ḡarad lafzī vs. ḡarad ma'nawī* հակադրությամբ: Արդյունքում 24 բայահիմքերը վերաբաշխվում են նույնպես երկու նկարագրական դասերում՝

- *mullḥaq bi-* (12 բայահիմք՝ *ŠaML,aI,a, ḤawQaLa, BayṬaRa, JaHwaRa, QaLnaSa, QaLSā; taJaLB,ab,a, taJawRaBa, taŠayṬaNa, taRaHwaKa; iQṬanS,as,a, iSLanQā*),
- *ḡayr mullḥaq* (12 բայահիմք՝ *'aXRaJa, JaR,r,aBa, QāTaLa, taĠāFaLa, taKaL,l,aMa, inṬaLaQa, iQtaDaRa, istaXRaJa, iŠHāB,b,a, iŠHaB,b,a, iĠD,awd,aNa, iṬLaw,w,aṬa*):

Առաջարկվող այս մոդելում հաջողվում է հարթել *'ilhāq*-ը՝ որպես իմաստագրուկ ածանցում մեկնելու Իբն Յախի խնդրահարույց փորձը:

Ատենախոսության **ՉՈՐՐՈՐԿ՝ «ՊԱՐՉ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԼԵԶՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅՑՈՒ ԻՄԱՍՏԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ»**, գլուխը, հենվելով ժամանակակից իմաստաբանական վերլուծությունների բաղադրիչային մեթոդի վրա, առաջարկում է ընդհանուր պատկերացումներ ԱԼԱ-ի իմաստաբանական բաղադրույցի մասին՝ նախ Սիբավեյհի *al-Kitāb*-ում, և ապա՝ ոչ շրջանի աշխատություններում:

Սիբավեյնի մոտ «Իմաստաբանությունը» լեզվի նկարագրության ընդհանուր մոդելի բաղկացուցիչ է, որը ձևաբանական վերլուծության հատվածում թույլ է տալիս ամբողջականացնել ձևաբանական հարացույցների համակարգը: Նպատակային ինտեգրման այսօրինակ մեխանիզմն ԱԱ-ի վաղ շրջանին բնորոշ ընդհանուր մեթոդական պատկերացումների շրջանակում է կոնկրետ իմույթների շուրջ խմբավորվում են բայահիմքեր, որոնք մեկ միասնական բառակազմական/թեմական հարացույց և, ինչը նպատակային է պարզ արմատական բայահիմքերի դեպքում, բայանվան նույնական կաղապար ունեն: Օպերացիոն մակարդակում խնդիրը լուծվում է ըստ էության դինամիկ դասակարգման միջոցով, որը հիմնված է միմյանցից անկախ բաց բազմությամբ իմույթների վրա՝ դրանք կիրառելով որպես բայանվանական կաղապարների դասակարգման ցուցիչներ:

Ընդ որում՝ դասակարգումն այս առումով կատարվում է «պոզիտիվ» մեխանիզմով, այսինքն՝ հնարավոր չէ պնդել, որ իմույթները միմյանց նկատմամբ փոխարացնող կամ հակադրվող հարաբերությունների մեջ են: Իմույթների կառուցվածքայնացման միակ մեխանիզմը դրանց երկհակադրումն է կամ երկբևեռումը (հավելյալ *didd* բաղադրիչի օգնությամբ):

Բայանվան նույնական կաղապարներ ունեցող հարացույցների բազմությունը իմաստաբանական ավելի մեծ միավորներում խմբավորելու համար Սիբավեյնին առաջարկում է ժամանակակից *իմաստաբանական փոխհարաբերակցություններ ու իմաստաբանական դաշտ (բառադաշտ)* հասկացություններին մոտ *taqārūb al-māʿānī* մեխանիզմը: Իմաստաբանական հիմքով բայանունների խմբավորման մեխանիզմից բացի Սիբավեյնին առաջարկում է նաև ֆորմալ մեխանիզմներ, որոնք կոնցեպտուալացվում են (*li-ʿanna*) *bināʾ al-fiʿl wāḥid, ʿid kāna bināʾ al-fiʿl wāḥid* հասկացություններում:

Մրա հետ մեկտեղ՝ իմույթները (բայահիմքերը) Սիբավեյնը խմբավորում է *գործողություն, վիճակ, հատկանիշ* սեռային հասկացությունների շուրջ, ինչը ֆորմալացման հետաքրքիր և ուղի է անցում մինչև ուշ շրջանի ֆերականները: Նույն արամաբանության շրջանակում առանձնացվում են նաև բայանվանական նույնական կաղապար ունեցող մի շարք բառա-իմաստային խմբեր:

Սիբավեյնի վերջնական նպատակը, այնուամենայնիվ, բայանվան հենքի վրա պարզ արմատական բայերի հարացույցների ավարտուն ցանկի կազմումն է, իսկ իմաստաբանությունը միայն միջոց՝ հնարավոր այլ մեխանիզմների հետ միևնույն շարքում: Միայն այս հանգամանքի գիտակցումը կարող է բացատրել ուշ շրջանի աշխատություններում կարծես թե ընդհանուր համատեմատից դուրս հայտնվող օրինակներն ու հիմնավորումները, որոնք գրեթե բառացիորեն մեջբերում են Սիբավեյնին:

ԱԱ-ի՝ *գործողություն, վիճակ* և *հատկանիշ* սեռային հասկացությունների շուրջ խմբավորված իմույթներն ատենախոսությունում վերլուծվում են ստորոգիչների (պրեդիկատ) դասակարգման մեթոդի շրջանակում:

Հաշվի առնելով արաբերենում բայանի և ստորոգական նվազագույն միավորի սահմանների համընկման հանգամանքը՝ իմաստաբանական բաղադրիչների ֆննարկումը զուգակցվում է ձևաշարահյուսական բաղադրիչի ներամամբ, ինչը *գործողության բայերի* դեպքում դիտարկվում է *taʿaddā ʿilā* հասկացության վերլուծության օրինակի վրա: Մրանով իսկ *taʿaddā* հասկացությունն առաջարկում է ընկալման երկու շերտ. ի տարբերություն այս հասկացության մինչ այս՝ հիմնականում «բովանդակային» մեկնաբանման՝ որպես բայի անցողականություն (որպես գործողության իմաստի (*fiʿl*) հանգեցում/անցում) կամ որպես շարահյուսական (մասնավորապես՝ *naṣb*) դիրքերի կառավարում (*ʿamal*):

Նախադասության դիտարկումը իմաստաբանական մակարդակում՝ որպես իրավիճակի (արտահայտված պրեդիկատորի՝ բայի միջոցով) ու իրավիճակի պարտադիր (պարտիսիպիանտ) և ոչ պարտադիր (ատրիբուտ) մասնակիցների ամբողջություն, թույլ է տալիս *taʿaddā* հասկացությունում վեր հանել հետևյալ շերտերը.

1. Այս հասկացության միջոցով նշավորվում է (*marked*) ակտանտների (նախադասության անդամների) այն ֆանակը, որը տվյալ բայը կարող է ունենալ ստորոգական կառուցի շրջանակում: Այս առումով բայերը Սիբավեյհի մոտ *միավալենտ* են (*ğayr muta'addī*) կամ *բազմավալենտ* (*muta'addī*), իսկ ստորոգական կառուցի շրջանակում տվյալ բայից կախյալ են հետևյալ անդամները.

1.1. *ğayr muta'addī* բայերից կախյալ նախադասության անդամներ՝ *fā'il* կամ *maf'ūl*<sub>SUB</sub>

1.2. *muta'addī* բայերից կախյալ նախադասության անդամներ՝ *fā'il*; *maf'ūl*<sub>SUB</sub>; *maf'ūl*<sub>OBJ</sub>; *maf'ūl* 'axar<sub>OBJ</sub>; 'in šī'ta iqtaṣarta 'alā l-maf'ūl<sub>OBJ</sub> al-'awwal (*at-tānī*); *laysa la-ka 'an taqtaṣira 'alā l-maf'ūlayn*<sub>OBJ</sub> *dūna l-'axar*: Բացառությամբ առաջին երկուսի՝ մյուս տերմինները Սիբավեյհին ընդհանրացնում է *mansūb* ձևակերպմամբ (*Sībawayhi, al-Kitāb II, 226.9*):

1.3. Ինչպես *ğayr muta'addī* այնպես էլ *muta'addī* բայերից (բացառությամբ ֆառավալենտ բայերի) կախյալ նախադասության անդամներ՝ *ism al-ḥadatān*; *al-marra min-hu* [*min al-ḥadat*] *wa-l-marratayn wa-mā kāna ḍarban mi-hu* [*min al-ḥadat*]; *az-zamān*; *kull mā štuqqa min lafz al-fi'l li-l-makān wa-'ilā l-makān*; *mā kāna waqtan fi l-'amākin wa-l-'azmina*:

2. Մյուս կողմից՝ *ta'addā* հասկացությամբ նշավորվում է բայի (պրեդիկատորի) և բայից կախյալ նախադասության անդամների (իրավիճակի մասնակիցների և «իրավիճակահեն ատրիբուտներ») միջև հարաբերության, կապի տեսակը:

2.1. Եթե նախադասության անդամների (իրավիճակի մասնակիցների) թիվը մեկից ավելի է, ապա «բայի (պրեդիկատորի) միջոցով արտահայտվող ինֆորմացիան (լինի հատկանիշ, գործողություն կամ ինչ-որ այլ բան) նախադասության հիերարխիկ կառուցվածքում ամենաբարձր անդամից (առաջին պարտիսիպիանտից) անցնում/հանգում է ամենցաշր անդամներին (երկրորդ, երրորդ պարտիսիպիանտին)» (*al-'af'āl allatī hiya 'a'māl ta'addā-ka 'ilā ḡayri-ka wa-tūqī'u-hā bi-hi*):

2.2. Եթե նախադասության անդամների (իրավիճակի մասնակիցների) թիվը միայն մեկ է, ապա «բայի (պրեդիկատորի) միջոցով արտահայտվող ինֆորմացիան (լինի հատկանիշ, գործողություն կամ ինչ-որ այլ բան) նախադասության հիերարխիկ կառուցվածքում ամենաբարձր անդամից (առաջին պարտիսիպիանտից) չի անցնում/հանգում հիերարխիկ ամենացածր անդամներին (երկրորդ, երրորդ պարտիսիպիանտին)» (*al-'amal lam yata'adda 'ilā mansūb*):

Ընդ որում՝ *ta'addā* հասկացությամբ ԱԼԱ-ում նկարագրվում են ոչ միայն բայերը, որոնք որպես պրեդիկատորներ գործողություն (*'amal*) են արտահայտում (ինչն այս հասկացության՝ անցողականություն ընկալմամբ միակ հնարավոր տարբերակը կլիներ), այլև արաբերենի բոլոր, ներառյալ *վիճակ, հատկանիշ* ցույց տվող բայերը: Հասկացության բովանդակային նման ընդգրկման հիմնում ընկած է Սիբավեյհի շարահյուսական մոդելում կարևորագույն այս հատկանիշի հիման վրա արաբերենի բոլոր բայերի վերջնական հնարավոր հաշվարկի գաղափարը (հմմտ.՝ *hādā bāb 'ilm kull fi'lin ta'addā-ka 'ilā ḡayri-ka*):

*ta'addā* հասկացության բովանդակային մեկ այլ շերտի վերհամման հնարավորությունն առենախոսությունում իրագործվում է դիատեզի (բայական սեռի) և ակտանտային ածանցման հասկացությունների ներգրավմամբ: Քննարկվում է հիմնական և ածանցյալ դիատեզի խնդիրը, և արաբական ավանդույթի համար առաջարկվում է երկու հիմնական դիատեզի գոյության մասին դրույթը, ինչը հիմնվում է այն հանգամանքի վրա, որ արաբական ավանդույթը (տարբեր շրջաններում ու մոդելներում մասնակի շեղումներով) բայական սեռը, մասնավորապես՝ կրավորական սեռի բայերը դիտարկվում է ոչ թե շարահյուսական մակարդակում, ինչպես վարվում է «ժամանակակից

լեզվաբանությունը», այլ ձևաբանական, ինչը և պայմանավորում է երկու՝ ներգործական և կրավորական հիմնական դիատեզի հնարավորություն:

*Գործողություն* սեռային հասկացության շուրջ Սիբավեյիը խմբավորում է *սահմանատարբերակիչ* բայերը (սահմանագծում տարածության և ժամանակի մեջ - 'intihā' az-zamān, mubā'ada, faraq wa-tabā'ud) ու շարժման բայերը, որտեղ շարժումը դիտարկում է առանձին *փուլերի*, *պահերի* կամ *գործադրված ջանքերի* հաշորդականություն: Այս խմբում ներառված են *ձայնարտաբերման* բայերը, ֆանի որ ձայնի արտաբերումը Սիբավեյիը դիտարկվում է որպես գործադրված ջանքերի արդյունք (*li-'anna ṣ-ṣawt qad takallafa fi-hi min nafsi-hi*), ինչի արդյունք է նաև ֆիզիկական շարժումը՝ *za'za'a*, *'ihtizāz*, *taḥarruk*, *tajayyush nafsi-hi wa-tatawwur*, *'idṭirāb*, *taqallub*, *taṣarruf*, *tu'ūr*, *takallafa* ← *as-ṣawt*: *Ձայնարտաբերման* բառիմաստային այս խումբը, որն իմաստաբանական բաղադրիչների հետևողական բաղադրման միջոցով հանգեցվում է շարժման բայերին և տեսականորեն հիմնավորված է սիբավեյիյան մոդելում, ընդհանուր համատեքստից կտրված հայտնվում է Իբն Յաիշի, Ազ-Ջամախշարիի մոտ, որտեղ այլևս հնարավոր չէ հետևել վերոնշյալ այս կապի տրամաբանությանը:

*Վիճակ* սեռային հասկացության շուրջ խմբավորված բայերում ու ածականներում արտահայտված ֆիզիկական հատկանիշները (թերություններ) կամ ֆիզիկական վիճակը Սիբավեյիի համար էպիգոդիկ են, ոչ կայուն ու անցողիկ ժամանակի ընթացում: Որոշ դեպքերում ավանդույթը «հենարկում» է նաև ֆիզիկական վիճակի՝ մարդկային մարմնում տեղակայման խնդիրը, ինչի արդյունքում առաջարկվում է զգացմունքների, զգացումների, ցավերի տեղակայման «եռաչափ» համակարգ՝ *fu'ād*, *badn* և *qalb* բաղադրիչներով:

*Հատկանիշ* սեռային հասկացության շուրջ Սիբավեյիի կողմից խմբավորված բայերում արտահայտված գործողությունը ներառվում է այնպիսի հատկանիշում (որակում), որը բնականորեն անբաժան է օբյեկտներից, ներակա, ժամանակի ընթացում անփոփոխ ու կայուն: Ինչ-որ առումով կարելի պնդել, որ այդ բայերը ոչ թե հատկանիշ (որակ) են ցույց տալիս, այլ «այդ հատկանիշում (որակում) լինելը», դրանք բնութագրում են ոչ թե «այդ հատկանիշի ժամանակային տեսականությունը, այլ այդ հատկանիշում գտնվելու ժամանակահատվածը, որը տևում է նիշտ այնքան, որքան գոյություն ունի այդ հատկանիշը կրող օբյեկտը»:

Մյուս խնդիրը, որն ատենախոսությունը դիտարկում է Ա.Ա.-ի իմաստաբանական բաղկացուցչի բննարկման շրջանակում, հարցադրումն է, թե արդյո՞ք առանձնացվող իմույթները նվազագույն (տարրական, թե բաղադրյալ) են (որպես իմաստաբանական մետալեզվի ձևաբանություն), և արդյո՞ք դրանց համադրությամբ (որպես իմաստաբանական մետալեզվի շարահյուսություն) ավանդույթը փորձում է իմաստաբանորեն ավելի բարդ միավորներ նկարագրել:

Նշվում է, որ Սիբավեյիի մոտ առկա որոշ ձևակերպումների «լայն» մեկնաբանությունը թույլ է տալիս Ա.Ա.-ում առանձնացնել այնպիսի հասկացություններ, որոնք մոտ են ժամանակակից իմաստաբանական վերլուծությունների բաղադրիչային սկզբունքի գործիքակազմին: Վերջինիս հիմքում նույնպես բառարանագրական ավանդույթն է ու լեզվի ողջ բառապաշարը՝ նվազագույն ֆանակով միմյանց հանգեցվող մինչև իմաստաբանորեն տարրական, ինքնին ընկալելի բաղադրիչների օգնությամբ բացատրելու ձգտումը:

Այս տրամաբանության շրջանակում պետք է դիտարկել Ա.Ա.-ի «իմաստաբանական բազմապատկիչները» (*'adad*, *ziyāda*, *nuqṣān*), որոնց առկայությունը կամ բացակայությունը «իմաստային փնջում», թույլ է տալիս Սիբավեյիին միևնույն բառիմաստային խմբում (ֆանակային կամ որակային) հակադրությունների վրա հիմնված իմաստաբանական փոխհարաբերակցություններ կազմել (*'adad*+/ *'adad*- :*kaṭīr*/'*azīm*; *aṭ-ṭūl*: *ziyāda*<sub>Quant</sub>+/ *nuqṣān*<sub>Quant</sub>-; *qubḥ*: *ziyāda*<sub>Qual</sub>-/ *nuqṣān*<sub>Qual</sub>+):

Սիբավեյնի մոտ իմաստաբանական բաղադրիչների փերականական արժեքի ընկալումը ատենախոսությունը դիտարկում է *muḡālabā* իմույթի օրինակով: Խոսքն ավանդույթի ուղ շրջանում *al-fi'l bayna 'itnayn* (գործողությունը երկու (գործողությունների) միջև) անվանվող բայերի մասին է, որն Իբն Ֆախըր վերլուծում է <sup>1</sup>*fā'ala-nī* <sup>2</sup>*[fa-fa'altu-hu → 'af'ulu-hu]* իմաստաբանական կաղապարի միջոցով. վերջինս իմաստաբանական *muḡālabā* շրջանակն է:

Կաղապարի առաջին բայն արտահայտում է *ինչ որ միտում*, որն առաջին պլան է մղում կրկնվող գործողության մեջ *փորձ կատարելու* իմաստը (կոնատիվ բայեր): Շրջանակի երկրորդ բայը ցույց է տալիս այդ միտման՝ որպես փորձերից մեկի հաջողված իրականացում ու որպես *գերակայութուն*, որը և նշավորվում է բայի հարացույցի փոփոխությամբ կամ *բայի հարացուցչային կոնվերսիայով* ու *իմույթի քերականացմամբ* (*muḡālabā-: xašama - yaxšimu ~* բանավեճում հաղթել (ընդհանրապես, բանավեճում հաղթելու գաղափարը, / *muḡālabā+: xašama - yaxšumu ~* բանավեճում գերազանցել մրցակցին, գերակայություն):

Ընդ որում՝ ԱԱ-ն դիտարկում է կոնատիվի շրջանակում *muḡālabā* իմաստաբանական բաղադրիչի նշարկման մեկ հնարավոր տարբերակ ևս: Այսպես, օրինակ՝ շիրացված կամ անհնար <sup>\*</sup>*{naza'a-nī* <sup>2</sup>*[fa-naza'tu-hu → 'anzu'u-hu]* շրջանակի փոխարեն հնարավոր է միայն <sup>1</sup>*naza'a-nī* <sup>2</sup>*[fa-ḡalabtu-hu → 'aḡlubu-hu]* տարբերակը, որտեղ *muḡālabā+* իմույթը բառականացվում (լեֆիկլապսովում) է *ḡalabā* բայի միջոցով: Քերականորեն ուղեվանտ իմաստաբանական բաղադրիչների բառականացումը արաբական ավանդույթը կոնցեպտուալացնում է որպես *istiḡnā' 'an- bi-*:

Ռոշակի կոնկրետ իմաստաբանական բաղադրիչի շուրջ բառիմաստային խմբերի վերլուծության մեկ այլ օրինակ ատենախոսությունը դիտարկում է *հարաբերացույց (ռեյացիոն) անունների* օրինակի վրա: Այդպիսի «ներկայացնում են որոշակի հարաբերության առաջին անդամն ու ունեն ներակայորեն պարտավորեցնող (օբլիգատոր) վալենտականություն, որը և համապատասխանում է այդ հարաբերության երկրորդ անդամին»: Այսպես, օրինակ՝ *ընկեր ~ 'ինչ-որ մեկի ընկեր', եղբայր ~ 'ինչ-որ մեկի եղբայր', հարևան ~ 'ինչ-որ մեկի հարևան', թշնամի ~ 'թշնամի ինչ-որ մեկի հանդեպ'* և այլն:

Սիբավեյնն իմաստաբանական նման օբլիգատոր վալենտականության գաղափարն ամփոփում է *fā'altu-hu* (փոխադարձ(աբար) համապատասխանել միմյանց) կաղապարում: Հարաբերության օբլիգատոր անդամը Սիբավեյնը դիտարկում է որպես հարաբերացույց անունների վերլուծության մեկ բաղադրիչ ևս ու այն անվանում *al-'adīl* (ուղեկից  $\approx$  պարտադիր X, [...] -ի հանդեպ), օրինակ՝ *'amura 'alay-nā* (էմիր դառնալ), *kamī, dajī* (կողակից), *jālīs* (ուղեկից), *xalīf* (ընկեր), *nazī* (օտարական), *xašm* (ընդդիմադիր, մրցակից):

Իմաստաբանական բաղադրիչային վերլուծության սկզբումը Սիբավեյնը կիրառում է փերականական իմաստների հնարավոր բոլոր նրբերանգները թվարկելու՝ նկարագրության իր մոդելում հիմնաբարային այս խնդրի լուծման համար: Այդպիսի բաղադրիչի դերում *al-katira* իմույթը, օրինակ, օգտագործվում է թվի փերականական իմաստի, ինչպես նաև *բայական հոգնակիություն* կամ *իրավիճակների բազմակիություն* (*katrat al-'amal*) տարբերակների թվարկման համար:

Ատենախոսությունում բայական հոգնակիության դիտարկումը իմաստաբանական մակարդակում՝ որպես մեկ ընդհանուր իրավիճակի բաղադատում առանձին կրկնվող միկրոիրավիճակների՝ ներառելով իրավիճակում ընդգրկված մասնակիցների փանակի, իրավիճակի ժամանակահատվածի բնութագրիչները, ինչպես նաև անորոշ և որոշյալ փանակության, ընդհատ կամ անընդհատ փանակի հասկացությունները, թույլ է տալիս ստանալ բայական հոգնակիության իմաստաբանական բաղադրիչների հետևյալ սանդղակը.

#### 1. Բայանվան մեջ ներառված իրավիճակների փանակ՝

##### 1.1. Իրավիճակի որոշյալ հոգնակիություն (կամ թվարկում)՝

- 1.1.1. Կոնկրետ ֆանակոթյան մեկ առանձին իրավիճակ,
- 1.1.2. Կոնկրետ տեսակի մեկ առանձին իրավիճակ,
- 1.2. Անորոշ հոգնակիություն՝
  - 1.2.1. Մեկ առանձին իրավիճակ,
  - 1.2.2. Բազմաթիվ կրկնվող (անընդհատ) (միկրո-) իրավիճակներ,
- 2. Մասնակիցների ֆանակը կրկնվող (միկրո-) իրավիճակներից յուրաքանչյուրում՝
  - 2.1. Միայն սուբյեկտ,
  - 2.2. Միայն օբյեկտ,
  - 2.3. Սուբյեկտ և օբյեկտ,
- 3. Մասնակիցների բնույթը կրկնվող (միկրո-) իրավիճակներից յուրաքանչյուրում՝
  - 3.1. Հաստատուն մասնակից կրկնվող (միկրո-) իրավիճակներից յուրաքանչյուրում,
- 4. Ժամանակահատված, որի ընթացքում կրկնվում է առանձին իրավիճակներից յուրաքանչյուրը՝
  - 4.1. Կրկնվող բոլոր (միկրո-)իրավիճակները տեղի են ունենում մեկ միասնական ժամանակահատվածում:

Ընդ որում, 2-րդ և 3-րդ բաղադրիչները հարադրելի են:

Նույն՝ *katrat al-'amal* բաղադրիչը Սիբավեյին օգտագործում է նաև ընդարձակված բայահիմքերի նկարագրության ժամանակ: Ատենախոսությունում ընդարձակված բայահիմքերի դեպքում իրավիճակների կամ բայական հոգնակիության դասակարգումը ներկայացվում է իրավիճակներում մասնակիցների ընդգրկման հաշտողականության ու իրավիճակների կրկնության ինտենսիվության, ինչպես նաև կրկնության պարբերականությունը հաշվի առնող հասկացությունների կիրառմամբ:

Առանձին ֆննվում են կրկնվող իրավիճակների ու այդ իրավիճակներում ընդգրկված մասնակիցների ֆանակի հարաբերակցության նշավորման եղանակները, ապա՝ առանձին իրավիճակի և կրկնվող իրավիճակների միջև իմաստաբանական կապերի տեսակները, մասնավորապես՝ գործողությունների *քանակի* կրճատում (*taxīf*) մինչև որոշակի ֆանակի (հաշվվող) գործողություն, գործողության *տեսակի* կրճատում մինչև որոշակի տեսակի գործողություն (*Nomina Speciei*), գործողությունների *քանակի* կրճատում մինչև որոշակի ֆվանտ կամ հատված գործողության մեջ (*Nomina Unitatis*):

Ատենախոսության **ՀԻՆԳԵՐՈՐԳ՝ «ԸՆԳԱՐՁԱԿՎԱԾ ՀԻՄՔԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ»** գլխում ներկայացվում են իմաստաբանական այն բաղադրիչները, որոնք արաբական լեզվաբանական ավանդույթն օգտագործում է ընդարձակված հիմքերի վերլուծության համար: Ընդ որում՝ ատենախոսությունն առաջարկում է խնդրի դիտարկման երկու մոտեցում, որոնցից առաջինը պայմանականորեն անվանվում է *բովանդակությունից՝ ձև*: Այն բնորոշ է ԱԼԱ-ի վաղ շրջանին, երբ թվարկվում են բայական ածանցման իմաստային հնարավոր բոլոր երանգավորումները՝ անկախ բայահիմքից: Խոսքն այդ դեպքում բառակազմական նշանակությունների մասին է: Դիտարկման մյուս տարբերակը, որն անվանվում է *ձևից՝ բովանդակություն*, բնորոշ է ԱԼԱ-ի ուշ շրջանին, երբ առանձին-առանձին, յուրաքանչյուր բայահիմքի համար անշատ ներկայացվում են բառակազմական բոլոր հնարավոր իմաստները: Ձևայած երկու այս մոտեցումներին՝ վերլուծության վերջնական նպատակը նույնն է՝ բայական բառակազմության իմաստային հնարավոր բոլոր նրբերանգների թվարկում, իսկ հիմնական մեթոդը՝ նշանակությունների վերաձևակերպումը (պարաֆրազը):

Բայական բառակազմական նշանակություններն ատենախոսությունը ներկայացնում է իմաստաբանական փոխհարաբերակցությունների միջոցով ու տրամաբանական բանաձևերի օգնությամբ:

*fa'ala*, *fa'ala* և *'afala* բայահիմքերի բառակազմական հնարավոր նշանակությունները միմյանց հակադրելով իմաստաբանական մի շարք փոխհարաբերակցությունների օգնությամբ՝ Սիբավեյինը

նախ դրանցում առանձնացնում է առաջնային կամ շնչավորված տարբերակը (ավանդույթին բնորոշ 'ašl/far' հակադրության տրամաբանության շրջանակում - *markedness*), որն ամփոփում է 'idā 'axbarta 'anna ğayra-hu šayyara-hu 'ilā šay' min hādā (համարժեք՝ 'idā 'aradta 'anna ğayra-hu 'adxala-hu fi dālika ձևակերպմամբ) իմույթում և ապա մանրամասնում հնարավոր իմաստային նրբերանգները: Ատենախոսությունը իմաստաբանական վերոնշյալ բաղադրիչը կրող բայերը վերլուծում է որպես *ուղղակի պատճառական բայեր* (DCAUS):

Իմաստաբանական նույն բաղադրիչն ուշ շրջանի աշխատությունները պիտակավորում են որպես *ta'diya* (*անցողականություն, անցողականացում, պատճառականացում*): Ազ-Ջամախշարիի և Իբն ալ-Հաշիբի համեմատ՝ այս բայերն ավելի մանրամասն է ֆննարկում Ալ-Աստարբադին, որը հստակ տարանջատում է «պատճառականության» ձևա-իմաստաբանական (*ma'nā l-ja'l*) ու իմաստաբանական-շարահյուսական (*tašyīr* և *naql* տարբերակներով) մակարդակները: Ատենախոսության մեջ նշվում է, որ վերլուծական նման մասնրամասնված գործիքակազմը թույլ է տալիս ԱԼԱ-ում պատճառականության նշանակությունը դիտարկել իմաստաբանական հիմքով ու շարահյուսական դիտանկյունով մի այնպիսի համակարգում, որը բազմաթիվ ընդհանրություններ ունի ժամանակակից լեզվաբանական՝ բայական վալենտականության մեծացման (ակտանտային ածանցման) մասին պատկերացումների հետ:

Բայահիմքերի ձևա-իմաստային փոխհարաբերակցությունների ամբողջությունն ավելի մանրամասն նկարագրելու համար ատենախոսությունն առաջարկում է տարբերակել *ta'diya* բաղադրիչով բառակազմության երեք հնարավորությունների միջև՝ *ձևաբանական, սուպլետիվ/ոչ սուպլետիվ* և *բառականացման*: Ձևաբանական տարբերակի վերլուծությունը թույլ է տալիս ավանդույթում տարանջատել ֆերականական իմաստի *ձևաբանականացման* կամ *ձևուլթականացման* հասկացությանը մոտ պատկերացումներ: Պատճառական *սուպլետիվ* բառակազմությունն ավանդույթում ենթադրում է նոր արմատով ('ašl) բառահիմքերի ներառում իմաստաբանական փոխհարաբերակցությունների շրջանակ (պատկերացումները կոնցեպտուալացվում են *lafz muxtalif* հասկացության շրջանակում): Բառականացման տարբերակն ավանդույթի տրամաբանությունը ստիպում է դիտարկել որպես *ձևաբանորեն ոչ պրոդուկտիվ* բառակազմություն: Ընդ որում բառականացումն ԱԼԱ-ում դիտարկման աստիճանական սանդղակ է ենթադրում, ինչն ատենախոսությունում ֆննվում է նույնարմատ *fa'vla<sub>INTR</sub>*, *fa'ala<sub>TRANS</sub>* և *'afala<sub>TRANS</sub>* բայահիմքերի բառակազմական հարաբերությունների վերլուծության օրինակի վրա: Այս շրջայում *fa'ala<sub>TRANS</sub>* բայահիմքի տեսականացման համար նկարագրական մոդել է ներմուծվում *binā' 'alā hida* հասկացությունը, որը «ձևաբանական-բառականացման» առանձին աստիճան է բառակազմական սանդղակում, որի հակադիր բևեռն արտահայտվում է *lafz muxtalif* հասկացությամբ:

Այսպիսով, ակտանտային ածանցման հասկացության ներմուծումը, որը ելակետային իրավիճակում ներառված մասնակիցների ֆանակի փոփոխությունը դիտարկում է իմաստաբանական մակարդակում ու սրանով իսկ տարբերվում դիատեզից (շարահյուսական դիտանկյուն), ինչպես նաև բառակազմական վերոնշյալ ձևային հնարավորությունների համադրումը թույլ է տալիս ատենախոսությունում ստանալ *ta'diya* հասկացության առավել համարժեք ընկալում՝ որպես «պատճառականության նշանակությամբ բայի վալենտականության ավելացման ձևաբանական մեխանիզմ»:

Պատճառականության նշանակության հնարավոր նրբերանգներից հաջորդը, որը Սիբավեյնը ներգրավում է *fa'altu-hu: ja'altu fi-hi fa'alan* պարաֆրազի օգնությամբ, ատենախոսությունը դիտարկում է որպես *անուղղակի պատճառական բայեր*, որոնցում օբյեկտը պատճառական իրավիճակում է ներառվում անուղղակի կերպով (*ja'altu: (P) fi X*):

Քննարկվում է նաև անդրադարձ պատճառականության բառակազմական-իմաստային խումբը՝ երբ սուբյեկտի նախածեղծած պատճառական իրավիճակն անդրադառնում է իր իսկ վրա (որպես *fa'altu-hu: 'idā 'aradta 'an taj'ala-hu mufilan* կամ *'af'ala: šayrurat aš-šay' dā kadā*):

«Նոստային (վերբայ) պատճառականության» (կամ վերագրական-բնութագրական) բայերի իմաստաբանական խումբը դիտարկվում է *sammaytu-hu (P)* իմաստաբանական բաղադրիչի վերլուծության օգնությամբ՝ ներգործական ու կրավորական (*ramā bi-dālika*) տարատեսակներով: Նույն բաղադրիչն Ալ-Աստարաբադին անվանում է *tasmiya*, որը լրացվում է *nasaba* (ինչ-որ մեկին ինչ-որ հատկանիշ (*ašl al-fi'l*) վերագրել) բաղադրիչով:

Պատճառական նշանակության մեկ այլ նրբերանգ ավանդույթն անվանում է *ta'riḏ*, երբ պատճառական իրավիճակը կրավորական է, իսկ իմաստաբանական մակարդակում անտեսվում է իրավիճակի օբյեկտի կամը՝ անտեսման հնարավոր երկու տարբերակներով: Առաջինի դեպքում օբյեկտը հայտնվում է իր համար տեղան (*'arradtu-hu li- (P) [...] fu'ila 'aw-lā*), իսկ մյուսի դեպքում՝ հանելի իրավիճակում (*ja'ala li-, ... min qibali l-hiba, ja'altu la-hu (P) [...] fu'ila 'aw-lā*):

Սիբավեյհի առաջադրած *istaqbala (X) bi-(P)* և *qāla (P) li-(X)* (ինչ-որ մեկին (X) (P)-ով ընդառաջ գնալ, դիմավորել, ասել) իմույթներն ատենախոսությունում դիտարկվում են խոսակցի ակտերի մասին տեսության և դերոկտոսիվ բայերի հասկացության շրջանակում: Ավանդույթի ավելի ուշ շրջանում Ալ-Աստարաբադին առաջարկում է բաղադրիչի ավելի մասնրամասն քննարկում՝ *ad-du'ā'* իմաստաբանական շրջանակում:

Իմաստաբանական նկարագրման ունիվերսալ գործիքակազմ են առաջարկում *šārā šāhib* և *istaḥaqqā* բաղադրիչները՝ *li-šayrurat aš-šay' dā kadā*, *li-wujūd aš-šay' 'alā šifa* տարբերակներով, որոնց այս կամ այն համադրությունն ԱԱ-ն օգտագործում է վերագրական, դեմոմիևալ, անդրադարձ բայերի տարբեր իմաստաբանական խմբերի նկարագրման համար:

Մնացորդային կամ նեգատիվ նկարագրման սկզբունքը կիրառելի է նաև իմաստաբանական բաղադրիչների տեսքով, ինչը թույլ է տալիս նկարագրության այսպես կոչված «հիմնական» հատվածից հետո բազմաթիվ օրինակներ ներառել կամ կցել մոդելի երկու՝ հիմնական հատվածի հետ *ընդհանրական (muštariḳ)* կամ *տարբերվող (muftariḳ)* տարբեր ունեցող խմբերում:

«ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐՈՒՄ» ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները՝ արաբական լեզվաբանական ավանդույթի մասին առաջադրվող հետևյալ ընդհանրական պատկերացումների շրջանակում.

1. Արաբական լեզվաբանական ավանդույթի դիտարկումը որպես «ուսմունքների» ամբողջություն հնարավորություն է ստեղծում ոչ միայն փոպայնացնել ավանդույթը, այլև տալիս է հասկացական գործիքակազմի զարգացական ընկալման հնարավորություն:
2. Ավանդույթի վաղ շրջանի պատմությունն անհրաժեշտ է դիտարկել լեզվի մասին (նախալեզվաբանական) գիտելիքի բազմազանության ու լեզվի նկարագրական/վերագրական/բացատրական երկետային մոդել(ներ) ստեղծելու միտման շրջանակում: Հաջորդող փուլերն արդեն լեզվաբանական գիտելիքի դասակարգման, նորմավորման, նկարագրական կորպուսի փակման ու տեսականացման հաջորդական աստիճաններ են: Այսպիսով, առավելապես դեպի տվյալները կողմնորոշված լեզվաբանական գիտելիքը ինչ-որ մի փուլում վերջնական շրջադարձ է կատարում դեպի տեսություն(ներ), ինչը պայմանավորված է նաև արտալեզվաբանական գործոններով՝ ընդհանուր ինտելեկտուալ միջավայրով ու, մասնավորապես, արաբա-մուսուլմանական մշակույթում (դասական/գրական) արաբերենի դերի ընկալմամբ:
3. Լեզվաբանական «ժամանակակից» ու «արաբական ավանդական/պատմական» մետալեզվի փոխհարաբերության խնդիրն ատենախոսությունում փորձ է արվում լուծել

շարադրանքում արաբական տարբերակների պահպանմամբ՝ առաջարկելով վերջիններիս մանրամասն վերլուծություն: Նման մոտեցումը թույլ է տալիս շտեղծել արաբականին զուգահեռ կամ փոխարինող սեփական թարգմանչական-մեկնաբանական մետալեզո, որն անխուսափելիորեն հիմնված է լինելու ժամանակակից լեզվաբանական այն գիտելիքի վրա, որի շրջանակում աշխատում է հետազոտողը, ու մյուս կողմից էլ՝ ընկալական-մեկնաբանական լայն հնարավորություններ է ստեղծելու ընթերցողի համար: Արդյունքում անհրաժեշտ հիմք է ստեղծվում ոչ միայն արաբական ավանդույթի մետալեզվի կոնտեքստալիզացիայի պահպանման համար, այլև ներունակ (իմանենա) է մնում պատմական գիտելիքը: Նման մոտեցման արդյունքում ժամանակակից լեզվաբանական տերմինաբանության, հասկացությունների, պատկերացումների ներմուծումը կոչված է միայն օժանդակելու արաբական ավանդական մետալեզվի առավել համարժեք ներկայացմանն ու համարման հնարավորությանը:

4. «Ժամանակակից» և «արաբական ավանդական/պատմական» լեզվաբանական գիտելիքի համադրության խնդիրն ստենախոսությունում դիտարկվում է ավելի լայն շրջանակում՝ լեզվաբանական մոտ պատկերացումների ու հասկացությունների գոյության հնարավորությունը պայմանավորելով նկարագրական օբյեկտի նույնականությամբ:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Karabekyan, S.B., Oganessian, A.P., Yavrumyan, M.M. “The Structure of the Semitic Root Revisited (the morpho-phonological approach).” *XXXVII International Congress of Asian and North African Studies. Abstract I*, 73-75, Moscow, 2004.
2. Yavrumyan, M.M. “Die Besonderheiten der morphologischen Analyse in der arabischen linguistischen Tradition”. *Արաբագիտական ուսումնասիրություններ* 1.148-178, 2006.
3. Karabekyan, S.B. & Yavrumyan, M.M. “Harf.” *Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL)*, vol. 2, 236-239, ed. by Kees Versteegh, Mushira Eid, Alaa Elgibali, Manfred Woidich, Andrzej Zaborski. Leiden: E.J.Brill. 2006.
4. Yavrumyan, M.M. „The Semantic Primitives in Arabic Linguistic Tradition“. *International Congress of Asian and North African Studies, ICANAS XXXVIII. Abstract I*, 24-25. Ankara, 2007.

**MARAT YAVRUMYAN**  
**The System of Verb Stems in Arabic Linguistic Tradition:**  
**Elements of Morphological and Semantic Analysis**

**SUMMARY**

Arabic-Muslim culture is distinguished by the interest of scientific thinking towards the realities of Arabic. In the complex of sciences, which was called *al-'ulūm al-arabiyya* (Arabic sciences) and was presented as a unity of disciplines (Koranic studies, Islamic law, lexicography, metrics etc.) based on Arabic and a conceptual system developed in Arabic, a linguistic constituent was discernible from the very beginning. In the course of time and within a specific historic-cultural context it stood apart and today is known as the Arabic linguistic tradition.

Today the historical discussion of Arabic linguistic tradition is in no need of independent justification; the presentation of theoretical positions of the Arabic medieval grammarians is still relevant. This brings up the issue whether or to what extent it is preferable to critically interpret them in the light of new systems and methods of linguistic description. Such an approach allows the concepts of the ALT to be understood with greater clarity.

The adequate perception and interpretation of research on the Arabic linguistic tradition as well its modern linguistic methodological base remains one of the current issues in the study of Arabic linguistics.

Successful research in recent years in this sphere gives the possibility of a principally new approach for both the individual problems of the tradition as well as its general logic.

“The Arabs [...] said what they wanted to say, but it might not be what we wanted to hear; nor did they always say it in the way we are accustomed to. Our task is not to think everything out for them but to find out what they thought and how.”<sup>4</sup>: Within the context of such an approach to the problem this study aims to adequately present and interpret the methods and fundamental conceptions of morphological and semantic analysis in the Arabic linguistic tradition and is based on the studies of Arab grammarians such as Sībawayhi (gest. 180/793), az-Zamaxšārī (gest. 538/1144), Ibn Yaʿīš (gest. 643/1245) and al-Astarābādī (gest. 688/1286).

To begin the study a brief presentation of general structure of the linguistic tradition is offered. Then basic concepts and methodological solutions are presented (*ʿaṣl*, *farʿ*, *samāʿ*, *qiyās* etc.) and the research framework is developed (morphological and semantic description of verbal base, word derivation).

Thereafter the morphological analysis of the linguistic tradition is presented in terms of word-form (*kalim*) modelling (*tamṭīl*) and word base (*bināʿ*) and grouping of the description classes (as classification). The modelling constituents are discussed in detail (*wazn*, *ʿaṣl*, *bināʿ*, *at-taṣrīf wa-l-fīl* etc.).

This is followed by a consideration of the morphological units used (*ḥarf ʿaṣlī*, *ḥarf zāʿid*, *taḍʿīf*, *muftariq*, *mujtamiʿ*, *az-zawāʿid al-ʿarbaʿ* etc.) and the functional-structural types of word base description (*al-ḡarad min az-ziyāda*, *ziyāda li-maʿnā*, *ʾilhāq* etc.).

The methodological solutions necessary for a classification of stems are considered in terms of the inner logic of the system. These are presented as a dynamic-causal classification with an open-ended data source during the early period of the tradition, and as a derivative classification with closed sets of data at the later period, after the early 4th/10th century.

---

<sup>4</sup> Frolov, D.V. (2000). *Classical Arabic Verse: History and Theory of ʿArūḍ*. Leiden: E.J. Brill; p.21.

The semantic analysis of the tradition is presented as an enumeration of semantic components, which are presented as a metalanguage of semantic description. Then the study forms the word stock of this metalanguage, followed by the discussion of the question whether these components are composite or minimal (*yūdaḥ bi-hi al-'ašyā'*). A separate theme for discussion is semantic markers (*muḡālaba, taxfīf, takṭīr, 'ilāj* etc.) and the conceptions of semantic multipliers (*ziyāda/nuqṣān* etc.).

The lexical-semantic groups of verbs (*'amal, al-xiṣāl, al-'ilal wa-l-aḥzān, za'za'at wa-taḥarruk, aṣ-ṣawt* etc.) and the so-called word-formation meanings of the tradition (*ṣayyara, adxala, ja'l, tasmiya, ta'rīd, ṣāra ṣāhib, wajada (li-), salb* etc.) are distinguished.

A list of terminology, with brief explanations, used in the ALT is also briefly presented in a Glossary.